



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՐԿՈՒ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ՝
ԳՐԱԲԱՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ**

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2016

ՀՏԳ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ա 791

*Հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոնները*

Խմբագիր՝ Լավրենտի Հովհաննիսյան (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ք. գ. դ.)

Գրախոսներ՝ Բ. Ներսիսյան (ք. գ. ք.), Ա. Սարգսյան (ք. գ. ք.),
Ն. Դիլբարյան (ք. գ. ք.), Ն. Պողոսյան (ք. գ. ք.)

Յուրի Ավետիսյան

**Ա 791 Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝
գրաբար և աշխարհաբար/Յու. Ավետիսյան: -Եր., ԵՊՀ
հրատ., 2016, 122 էջ:**

Գրքույկը նվիրված է գրական հայերենի շրջանաբաժանման խնդիր-ներին: Փորձ է արվում եղած կարծիքների ու փաստերի հիմքի վրա առաջարկելու հայերենի գրավոր շրջանի փուլերի դասակարգման՝ այսօր իշխող տեսակետից փոքր-ինչ տարբեր՝ նոր տեսակետ:

Գրքույկը կարող է օգտակար լինել հայոց լեզվի մասնագետների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայերենագիտությամբ, մասնավորապես՝ հայոց լեզվի պատմությամբ:

ՀՏԳ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2139-4

© ԵՊՀ հրատ., 2016
© Յու. Ավետիսյան, 2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գիտության ցանկացած ոլորտում կան հարցեր կամ հարցերի շրջանակ, որոնք գիտական քննարկումներից և որոշակի լուծումներ ստանալուց հետո, թվում է, նոր արժարժումների քիչ առիթներ պետք է ունենան, մանավանդ եթե ներկայացվում են ոլորտի գիտակի և մեծ համբավ ունեցող գիտնականի կողմից: Բայց գիտական առաջընթացի տրամաբանությունը հուշում է, որ դրանք ժամանակ առ ժամանակ օբյեկտիվորեն նետվում են քննարկումների թատերաբեմ՝ «ակնկալելով» վերլուծությունների և լուծումների նոր եղանակներ՝ նոր հայացքով և նոր մոտեցումներով կամ մեթոդաբանությամբ:

Գրական հայերենի շրջանաբաժանման հարցը հարյուր և ավելի տարիներ գիտական հետաքրքրությունների առանցքում է: Եվ այն տպավորությունը կա, թե հարցը վերջնական լուծում ստացավ 1951 թ. Գևորգ Ջահուկյանի զեկուցումով, որը հետագայում որոշ փոփոխություններով վերահրատարակվեց նրա այլ աշխատություններում:

Ելնելով գրական լեզվի ըմբռնման նոր սկզբունքներից ու մոտեցումներից, միջին հայերեն - արևմտահայ աշխար-

հաբար ակնհայտ ընդհանրությունների առկայության փաստից և **արդի հայերեն** ու **ժամանակակից հայերեն** հասկացությունների այսօր առավել հավաստի թվացող մեկնաբանություններից՝ առաջարկվում է որոշ ճշգրտումներ կատարել գրական հայերենի շրջանաբաժանման ընդունված տարբերակում:

Աշխատանքի որոշ դրույթներ գեկուցման տեսքով ներկայացվել են 2015 թ. աշնանը ԵՊՀ-ում կազմակերպված՝ Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովում: Ծավալուն տարբերակը հողվածի տեսքով հրատարակվել է ԵՊՀ «Հայագիտության հարցեր» հանդեսում (2016, թիվ 1):

Այս գրքույկում աշխատանքը գետեղված է որոշ փոփոխություններով և հավելումներով:

1. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՉ ԳՐԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Գրական հայերենի շրջանաբաժանման հիմքում Գևորգ Ջահուկյանը դնում է երեք սկզբունք՝ **1.** Լեզվի պատմությունը տվյալ լեզվի բոլոր տարատեսակությունների պատմությունն է: **2.** Շրջանաբաժանումը չպետք է հասկացվի բացարձակ իմաստով. «Այն առավել կամ պակաս չափով հարաբերական բնույթ ունի»: **3.** Լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ¹: Այս մոտեցմամբ առանձնացվում է հայոց լեզվի գրավոր շրջանի պատմության երեք փուլ՝ հին շրջան (V-XI դարեր), միջին շրջան (XII-XVI դարեր), նոր շրջան (XVII դարից մինչև մեր օրերը): Գիտական շրջանառության մեջ դրված այս տեսակետը այսօր պաշտպանվում է առանց վերապահության: Սակայն շուրջ յոթ տասնամյակի պատմություն ունեցող մոտեցումները, մեր կարծիքով, որոշ բացատրությունների և ճշգրտումների պահանջ ունեն:

¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 33-35:

Անդրադառնանք առաջին սկզբունքին, որը մեր տպավորությամբ ամենից կարևորն է. **լեզվի պատմությունը տրվյալ լեզվի բոլոր տարատեսակությունների պատմությունն է:** «Լեզվի պատմության շրջանաբաժանումը,– գրում է Գ. Ջահուկյանը,– պետք է արտացոլի լեզվի պատմության տարբեր շրջաններում այդ տարատեսակների փոխհարաբերության մեջ կատարված տեղաշարժերը, որոնք արտացոլվում են լեզվի զարգացման օրենքների մեջ»²: Ասել է թե՛ լեզվաբանը չի փորձում տալ հայերենի միայն գրական արտահայտությունների պատմության շրջանաբաժանումը: Եվ այս մոտեցմամբ միանգամայն հասկանալի կարող էր լինել միջին հայերենի առանձնացումը որպես առանձին շրջափուլ, թեև բաց էր մնում լեզվի տարատեսակություններից, օրինակ, բարբառների խնդիրը. XV-XVI դարերում բարբառների ակտիվացումը արդյո՞ք առանձին շրջափուլ էր, թե՞ ենթաշրջան միջին հայերենի համակարգում:

Բայց իր սկզբունքները շարադրելիս Գ. Ջահուկյանը անում է ևս մի վերապահություն. երբ խոսում ենք լեզվի գրային շրջանի մասին, նկատում է նա, «այնուամենայնիվ, մենք ստիպված ենք մեծ մասամբ սահմանափակվել գրական լեզուների պատմությամբ՝ այլ կարգի տվյալների խիստ սահմանափակության պատճառով»³: Այս մոտե-

² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 33:

³ Նույն տեղում, էջ 34:

ցումը որդեգրելուց հետո, երբ հայոց լեզվի բոլոր տարատեսակությունների պատմության շրջանաբաժանման փորձը ի վերջո օբյեկտիվորեն հանգում է գրական լեզուների շրջանաբաժանման, լեզվաբանին այլ բան չէր մնում, քան միջին հայերենը տեղավորել հայոց գրական լեզուների պատմական շրթայի մեջ՝ նրան վերագրելով գրական լեզվի հատկանիշներ: Ջահուկյանը սրանով պայմանականորեն ընդլայնում է առհասարակ գրական լեզվի ըմբռնման սահմանները՝ նրա հիմնական հատկանիշ համարելով ավելի կամ պակաս նորմավորված լինելը և կայուն լեզվական որակ ունենալը: Այսօր խիստ հստակեցված են այդ սահմանները: **Գրական լեզուն** ազգային լեզվի պատմական գոյության ձև է, որը լեզվակիրառողի կողմից ընդունվում է որպես օրինակելի. ընդհանուր գործածական այնպիսի լեզվատարրերի և խոսքային միջոցների պատմականորեն ձևավորված համակարգ է, որոնք ազգային լեզվի կրթված կրողների ու խոսքի հեղինակավոր վարպետների կողմից տեքստերում (գրավոր և բանավոր) ենթարկվել են տևական մշակման⁴: Որպես գրական լեզվի հիմնական որակներ են նշվում մշակվածությունը, միասնականությունը, ավանդականությունը, գրավոր ամրագրումը, գրական լեզվի շրջանակներում խոսակ-

⁴ Стен Э. Азимов, А. Шуккин, Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., 2009 (էլ. հասցե՝ http://methodological_terms.academic.ru/859/ЛИТЕРАТУРНЫЙ):

ցական և գրքային լեզվատարրերի համատեղ գործառու-
թյունը, ոճական բազմազանությունը և ազատ կիրառելիու-
թյունը գործառական բոլոր ոճերում, զուգաձևությունների
հաղթահարման միտումը, գործառական փոխներթա-
փանցումները, առաձգական կայունությունը և այլն:
Գրական լեզուն վերբարբառային իրողություն է և իր մշակ-
վածությամբ «հակադրվում» է բարբառայնությանը, հա-
սարակաբանություններին ու ժարգոններին: Գրական լեզ-
վի բոլոր բնորոշումներում որպես հիմնական հատկանիշ
է առանձնացվում **նորմավորվածությունը**: Դա արտահայտ-
վում է նրանով, որ գրական լեզվի բառային կազմը ըն-
տրված է ընդհանուր համաժողովրդական լեզվի բառա-
զանձից, բառերի իմաստներն ու գործածությունները, ար-
տասանությունը և ուղղագրությունը կանոնակարգված են,
ձևակազմությունը և շարահյուսական կառույցները են-
թարկվում են համընդունված օրինաչափություններին: Գրա-
կան լեզվի նորմերը համապարտադիր են բոլոր լեզվա-
կիրառողների համար խոսքային հաղորդակցման բոլոր
ասպարեզներում⁵: «Գրական լեզուն,– կարդում ենք դա-
սագրքային սահմանումներից մեկում,– ազգային լեզվի
պատմականորեն ձևավորված բարձրագույն ձև է, լեզ-
վական միջոցների նորմավորված, կանոնակարգված, մշակ-

⁵ Տե՛ս նույն տեղը: Նաև՝ **Д. Розенталь, М. Теленкова**, Словарь-справочник лингвистических терминов, изд. 2-е, М., 1976: (էլ. հասցե՝ http://dic.academic.ru/dic.nsf/lingvistic/684/литературный_язык)

ված համակարգ, որը հանդես է գալիս որպես օրինակելի և ընդհանուր գործածական որակ ու ծառայում է իբրև հաղորդակցման միջոց հասարակական և անճնական գործունեության բոլոր ոլորտներում»⁶:

Միջին հայերենը ոչ մի կերպ չի տեղավորվում գրական լեզվի նորագույն ըմբռնման այս շրջանակներում: Միջին հայերենի ուսումնասիրությամբ զբաղվող բոլոր լեզվաբանները հատուկ շեշտում են այն միտքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը գրական լեզվի կարգավիճակի չհասավ: Գերմանացի հայագետ **Յոզեֆ Կարստը** միջին հայերենի առաջացման ու կազմավորման հարցերում հիմնականում պաշտպանում է իր նախորդների տեսակետները. միջին կամ կիլիկյան հայերենի շրջան է համարում XI-XV դարերը, նոր հայերենի ժամանակաշրջանը սկսում է XV դարից: Միջին հայերենը դիտում է որպես հին և նոր հայերենների միջև ընկած ժամանակաշրջան: Տարբեր առիթներով նա շեշտում է այն հանգամանքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը իր լեզվական որակներով չի ներկայանում որպես միասնական և մշակված, միատարր լեզու և ունի անցման շրջանի լեզվի կամ շրջավորի հատկանիշներ, աչքի է ընկնում բարբառային տարբերություններով⁷: **Գուրգեն Սևակը**, խոսելով IX-XIII դա-

⁶ **А. Радугин**, Русский язык и культура речи, М., 2004, с. 50.

⁷ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Խ. Ա. Եր., 1972, էջ 13-16: Այսուհետև՝ շարադրանքում՝ Ա 1, և էջը:

րերում ստեղծված աշխարհիկ գրականության մասին, նշում է, որ այդ գրականությունը ստեղծվում է նոր լեզվով, որը «միջին հայերեն ընդհանուր անունն է կրում, թեև միասնական չէ և նայած հեղինակի բարբառին, գրաբարագիտության չափին ու ճաշակին՝ ավելի կամ պակաս չափով մոտ է գրաբարին»⁸: **Սերոբ Ղազարյանը** միջին հայերենի նկարագրությանը նվիրած իր աշխատություններում գրավոր հայերենի այդ տարբերակը թեև անվանում է «իր օրինաչափությունները ունեցող գրական լեզու», «հայոց գրական լեզվի միջին շրջան», «գրական նոր լեզու»⁹ և իր տեսակետը փորձում է հիմնավորել այն փաստարկումով, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը չենք կարող նույնացնել ժամանակի խոսակցական լեզվի հետ, սակայն տարբեր առիթներով շեշտում է այն գաղափարը, որ այդ լեզուն միատարր չէ, աչքի է ընկնում ձևերի բազմազանությամբ և ի վերջո չի հասնում զարգացման անհրաժեշտ մակարդակի. լեզվաբանը միջին հայերենի բնութագրական ընդհանուր հատկանիշ է համարում այն, որ հայերենի զարգացման այս շրջափուլում «կիրառվում էին լեզվական միևնույն կանոնը արտահայտող տարբեր ձևեր, որոնք ցույց էին տալիս, որ այդ լեզվի մշակման ու կայունացման պրոցեսը դեռևս չի

⁸ **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 52:

⁹ Տե՛ս **Ս. Ղազարյան**, Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, էջ 6-7, 96:

ավարտվել»¹⁰: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» **հեղինակները** թեև իրենց երկհատոր աշխատասիրության վերնագրում **միջին հայերեն**-ի կողքին գետեղել են **գրական** որակումը, բայց գրքի հենց ներածական մասում ու նաև շարադրանքում մի քանի անգամ հիշեցնում են, որ **գրական** անվանումը պայմանական է, որ կլիկյան հայերենի գրական լինելը պիտի ընդունել որոշ վերապահությամբ, և որ այդ հայերենն իր գոյության ամբողջ շրջանում միօրինակ չի եղել: Նշվում են նաև հիմնավոր պատճառներ և ազդեցություններ. «...Կլիկյայում գրի առնված ժողովրդական հայերենը հնարավորություն չունեցավ մշակվելու և դառնալու կանոնավոր ու միասնական օրինաչափություններով գրական լեզու,– գրում է Հ. Մուրադյանը:– Դրան նախ` խանգարում էր նրա հիմքում ընկած խոսակցական լեզվի անմիօրինակությունը: Չնայած գրավոր լեզվի հիմքում ընկած բանավոր լեզվի ընդհանրություններին, այնուամենայնիվ, սնվելով ժողովրդական լեզվի ակունքներից, նա իր մեջ էր առնում նաև տարբերությունները, որոնք և առաջացնում էին անմիօրինակություններ: Մյուս կողմից` այդ տարբերությունները հաղթահարելու և դրանք միասնական գրական լեզվի մեջ ձուլելու համար պահանջվում էր երկարատև ժամանակ, որից սակայն զրկվեց գրական լե-

¹⁰ **Ս. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 204:

զուն՝ կիլիկյան պետականության վերացման հետևանքով» (Ա 1, 36-37): «Նորակազմությունների տարածման և անկանոնությունների մասնակի վերացման հետևանքով լեզվի համակարգը զգալիորեն ձգտում է պարզեցման,– գրում է **Լիանա Հովսեփյանը**:– Սակայն նորմալի տեսակետից լեզուն դեռևս կայունացած չէ իր քերականական ձևերի մեջ: Այդ պատճառով էլ միջին հայերենի հոլովման համակարգը աչքի է ընկնում ներքին անմիօրինակությամբ, թերույթների բազմազանությամբ և նրանց տարբերակների միջև փոխանցումների ազատությամբ: Միևնույն քերականական իմաստն ունեցող ձևույթների այդ բազմազանությունը ստեղծվում է ի հաշիվ գրաբարից և միջին հայերենի տարբեր բարբառներից եկող լեզվական իրակությունների խառն ու առանց ընտրության օգտագործման»¹¹: Մեկ այլ առիթով Լ. Հովսեփյանը ավելացնում է. «Միջին հայերենի շրջանի համար խիստ բնորոշ է լեզվական տարբեր համակարգերի փոխներթափանցումը, տարբեր ծագում ունեցող ձևերի կիրառությունը միևնույն բնագրում: Իսկ եթե նկատի ունենանք, որ միջին գրական հայերենը այնպես էլ չհասավ գրաբարին բնորոշ նորմավորման և միօրինակացման, չհաղթահարեց նույնիմաստ քերականական ձևերի բազմազանությունը, ապա կատացվի մի բավական խայտաբղետ պատկեր,

¹¹ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Եր., 1975, էջ 8: Այսուհետև՝ շարադրանքում՝ Ա 2, և էջը:

որ խճանկար է հիշեցնում»¹²: Ինքը՝ **Գ. Ջահուկյանը** ևս, բուն միջին հայերենի շրջափուլի մասին խոսելիս մեկ անգամ չէ, որ ընդգծում է այդ միտքը. միջին հայերենը, ըստ նրա, «մշակման որոշակի հունի մեջ չի դրվել և անմիօրինակ է», միջին հայերենը այդպես էլ չկարողացավ հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին:

Գրավոր գրական հայերենի պատմական զարգացման շրթայի մեջ **միջին շրջանի առանձնացումը** սովորական է այնպես, ինչպես մի շարք այլ լեզուների պարագային (օր.՝ միջին անգլերեն կամ միջին գերմաներեն). առանձնացումը ունի հիմքեր նաև հայերենի դեպքում՝ տրամաբանական պոստուլատը («եթե կան հին և նոր շրջաններ, ապա պետք է լինի դրանք միացնող՝ անցման շրջան»), ժամանակագրական անհրաժեշտությունը («այդքան երկար ժամանակաշրջանի համար միայն երկու՝ հին և նոր շրջանների առանձնացումը բավարար չէ»), պատմության փաստերը («կան հին շրջանի և կան նոր շրջանի գրավոր հուշարձաններ, բայց կան գրավոր հուշարձաններ, որոնք չեն կարող վերագրվել ո՛չ հին և ո՛չ էլ նոր շրջաններին»), լեզվաբանական ընդհանուր ավանդույթը: Այս պնդումը դառնում է առավել քան համոզիչ, մանավանդ եթե շրջանաբաժանման մեջ նկատի ենք առնում հայոց լեզվի բոլոր տարբերակների պատմությունը:

¹² **Լ. Հովսեփյան**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր., 1997, էջ 11: Այսուհետև՝ շարադրանքում ԺԳ, և էջը:

«Սա, իհարկե, փոքր-ինչ վերացական մոտեցում է,– շարունակելով իր միտքը՝ գրում է Գ. Ջահուկյանը,– եթե մենք «տարբերակներ» բառը չենք լցնում որոշակի բովանդակությամբ, հենվում ենք միայն գրավոր հուշարձանների վրա, չենք կարողանում վերականգնել միջին հայերենի բանավոր տարբերակները վերականգնողական տարբեր մեթոդներով: Սակայն մեթոդաբանական առումով սա միակ ճշգրիտ մոտեցումն է»¹³: Այսպիսով՝ միանգամայն տրամաբանական է և գիտականորեն հիմնավորվում է հայոց լեզվի զարգացման պատմության մեջ միջին շրջանի առանձնացումը: Այդ կարծիքը այս կամ այն կերպ առավել կամ պակաս հիմնավորվածությամբ պաշտպանվում է հարցին նվիրված գրեթե բոլոր ուսումնասիրություններում: Բայց, այնուամենայնիվ, առավել կարևոր է մնում հարցի մյուս կողմը. ի վերջո լեզվական ի՞նչ որակներով է բնութագրվում այդ շրջանի հայերենը:

Նորմավորված և միասնական գրական լեզվի կարգավիճակ ունեւ գրաբարը: Նոր հայերենը կամ աշխարհաբարը՝ իր երկու տարբերակներով, գրական լեզվի կարգավիճակ ձեռք բերեց XIX դարավերջին և XX-ի սկզբներին: Հայերենի գրավոր պատմության միջին շրջանի լեզուն (XII-XVI դարեր) ակնհայտորեն չհասավ այդպիսի

¹³ Գ. Ջահուկյան, Միջին հայերենը որպէս լեզվական որակ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1993, թիվ 1, էջ 14-15:

նորմավորման ու միասնացման: Ավարտուն և ամբողջական նկարագիր չունեցավ: Չգտեց դառնալու գրական լեզու, բայց չհասավ դրան: Մնաց որպես գրականացող լեզու: Իր հայտնի գեկուցումից շուրջ քսան տարի անց, քըննարկելով միջին հայերենի գրական արտահայտության հարցը, այսպիսի եզրակացության է հանգում Գ. Ջահուկյանը. «Արդ ինչպիսի՞ն է վիճակը միջին հայերենի դեպքում: Կարելի՞ է արդյոք խոսել միջին հայերենի, որպես նույնպիսի նորմավորված և միասնական գրական լեզվի մասին: Այստեղ մենք ստիպված ենք հավաստել հետևյալը: Առաջին՝ եթե գրաբարի սկզբնական և նոր գրական հայերենների վերջին փուլերը բացահայտորեն նորմավորված և միասնական գրական լեզուներ են, ապա միջին հայերենի պատմության ողջ ընթացքում այդպիսի բացահայտորեն նորմավորված և միասնական վիճակ դժվար է արձանագրել. նրան հատուկ են ձևերի բազմազանությունը և բազմիմաստությունը: Երկրորդ՝ գրաբարը ողջ հին շրջանում և նոր գրական հայերենները XIX դ. կեսերից սկսած որպես գրական լեզուներ իշխող են և իրենց տարածման շրջաններում ուրիշ գրական լեզուների հետ գործառույթները չեն բաժանում. այլ է վիճակը միջին հայերենի դեպքում, երբ շարունակում է գործել գրաբարը որպես գրական լեզու՝ գործառույթների և սպասարկման բնագավառների բաժանմամբ: Այդ վիճակը կարելի է համեմատել միայն վաղ աշխարհաբարի շրջանի վիճա-

կի հետ, երբ աշխարհաբարը նույնպես իր գործառույթները բաժանում էր գրաբարի հետ: Բայց չէ՞ որ այս շրջանում աշխարհաբարը դեռ լրիվ նորմավորված չէր և հանդես էր գալիս որպես գրական լեզվի հենց վաղ՝ նոր ձևավորվող վիճակ: Սա նշանակում է, որ միջին հայերենը երբեք չի հասել գրական լեզվի կատարյալ վիճակի. այն, բառիս բուն իմաստով, գրականացող լեզու է: Երրորդ՝ եթե նոր գրական հայերեններից արևմտահայերենը իշխում է արևմտահայերի և արևելահայերենը՝ արևելահայերի մեջ, ապա միջին հայերենը փաստորեն իշխում է միայն արևմտյան շրջաններում և չունի որևէ մրցակից արևելահայ շրջաններում... Այսպիսով, մենք կարող ենք արձանագրել, որ միջին գրական հայերենը ունեցել է տարածական ու գործառական սահմանափակում և որպես գրական լեզու չի հասել կատարյալ նորմավորման ու միասնացման»¹⁴:

Անմիօրինակությունները առկա են միջին հայերենի լեզվական բոլոր մակարդակներում՝ սկսած հնչյունականից մինչև շարահյուսական կառույցներ: Վկայված բազմաթիվ իրողություններից թվարկենք ընդամենը մի քանիսը:

Հնչյունական համակարգ: Միջին հայերենի գրավոր հուշարձաններում արձանագրվում է բաղաձայնական չորս համակարգի առկայություն. 1. բուն միջին հայերենին հա-

¹⁴ Նույն տեղում, էջ 16-17:

տուկ եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությամբ, այսպես կոչված՝ կիլիկյան համակարգ՝ **բ, գ, դ, ձ, ջ** (<**պ, կ, տ, ծ, ճ**), **պ, կ, տ, ծ, ճ** (<**բ, գ, դ, ձ, ջ**), **փ, ք, թ, ց, չ**, 2. եռաստիճան անտեղաշարժ համակարգ, որի մեջ գրաբարյան ձայնեղների, խուլերի և շնչեղ-խուլերի շարքերը պահպանվել են անփոփոխ՝ **բ, գ, դ, ձ, ջ, պ, կ, տ, ծ, ճ, փ, ք, թ, ց, չ**, 3. քառաստիճան կամ եռաստիճան ձայնեղագուրկ՝ բառասկզբի դիրքում (Մշո և Կարնո բարբառների տիպի)՝ **բհ, գհ, դհ, ձհ, ջհ, պ, կ, տ, ծ, ճ, փ, ք, թ, ց, չ**, և 4. արևմտահայ գրական լեզվի երկաստիճան խլազուրկ համակարգ՝ **բ, գ, դ, ձ, ջ** (<**պ, կ, տ, ծ, ճ**), **փ, ք, թ, ց, չ** (<**բ, գ, դ, ձ, ջ** և **փ, ք, թ, ց, չ**) (Ա 1, 118-123)¹⁵:

Ուղղագրություն. կան բառեր և բառաձևեր, որոնց մեջ հերթազայում են **ո//օ//ու** գրերը՝ **տոմար//տաւմար//տօմար, կաթողիկէ//կաթաւղիկէ//կաթուղիկէ**, նմանապես՝ **կաթողիկոս//կաթաւղիկոս//կաթուղիկոս, Լամբրոն//Լամբրան//Լամբրուն //Լապրուն** (Ա 1, 85), առկա է **ե-ի** և **է-ի** գրության շփոթ (զէր//զեր, աղէկ//աղեկ, քաւէլ//քաւել, ամէն//ամեն և այլն), **ո-ի** երկգրություններ, օրինակ, ենթակայական դերբայում (ծնող//ծնաւոյ, ընթերցող//ընթերցաւոյ) (Ա 2, 65-67), եռագրություններ (բաշխաւոյ, խաբող, առնող, գնօղ,) (Ա 1, 314), սկզբնաղբյուրներում արձանագրվում են բառերի հնչյունափոխված բազմազան տարբերակներ՝ **յուղարկէ, յղար-**

¹⁵ Տե՛ս նաև նույն տեղը, էջ 17:

կէ, դրկէ, ուղարկէ, յօղարկէ (Ա 2, 80), այգի, էգի, իգի (Ա 1, 93), առնել, արնել, այրնել, այնել, անել, էնել, ընել (Ա 2, 151) և այլն:

Ձևաբանական համակարգ: Ձուգաձևությունները և տարբերակային ձևերի փոխանցումները չափազանց շատ են մասնավորապես հոլովական ձևերում ու հոլովումներում, հոգնակիի կազմության մեջ, գոյական դերանունների թեքված ձևերում, բայի խոնարհման համակարգում: Մեծ թվով անուններ փոխանցում են կատարում **ի, ո, ու** հոլովումների միջև՝ շատ հաճախ կազմելով եռաձևություններ, ինչպես՝ **ամսի//ամսոյ//ամսու, առիւծի//առիւծոյ//առիւծու, արևի//արևոյ//արևու, գետի//գետոյ//գետու, ուժի//ուժոյ//ուժու, ծովի//ծովոյ//ծովու, փողի//փողոյ//փողու, շահի//շահոյ//շահու, տեղի//տեղոյ//տեղու, օձի//օձոյ//օձու** և էլի տասնյակ այլ բառեր, ինչպես նաև այլ տիպի փոխանցումներով՝ **Գրիգորի//Գրիգորոյ//Գրիգորայ, ցորեկի//ցորեկոյ//ցորեկվան, ընկերի//ընկերու//ընկերոջ, գառնի//գառնոյ//գառան//գառին** և այլն (Ա 2, 32-34): Միջին հայերենը պահպանում է գրաբարի բոլոր հոգնակերտները և դրանց հավելում նորերը: Գոյականի հոգնակին կազմվում է երկու տասնյակից ավելի (այլ հաշվարկներով դրանց թիվը հասնում է չորս տասնյակի, տե՛ս ԺԳ, 18) վերջավորություններով (**-եր, -ք, -ներ, -նի, -ունք, -վի, -ստան, -այք, -որայք, -անի, -իք, -տի, -ան, -ար** և այլն), որոնք տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների մոտ առավել կամ պա-

կաս կենսունակությամբ են հանդես գալիս: Օրինակ՝ **ա-կռա** - ակռայք//ակռեր//ակռանի//ակռաներ, **ոտք** - ոտք//ոտեր//ոտնի//ոտվի//ոտներ, **միրգ** - միրգք//մրգեր//մրգունք//մրգանք, **ծաղիկ** - ծաղիկք//ծաղկունք//ծաղկներ//ծաղկնի//ծաղկունաք, **իր** - իրք//իրվի//իրվան//իրվտանք, **աչք** - աչեր//աչք//աչվի//աչունք//աչվեր//աչվներ//աչվնի և այլն (Ա 2, 62): Ըստ որում, մի խումբ հոգնակերտներ կարող են գործածվել նաև միասնաբար, ինչպես՝ **գետերքք, մարդիկք, մանկտիկ, իրվտանք, աչվնի, իշվանք, գեղերայք** և այլն (Ա 2, 38): Միջին հայերենին հատուկ՝ հիմնական և անհամեմատ ավելի գործուն ձևերի կողքին մատենագրության մեջ հանդիպում են սահմանափակ կիրառություն ունեցող դերանվանաձևեր՝ ստեղծելով զուգաբանությունների անմիօրինակ շարքեր. **մենք** դերանվան բացառականի տարբերակներից են՝ **ի մեզնէ, ի մեզանէ, մենէ, մեզէ, մեզնէ, ի մենէ**, կամ՝ **դու** դերանվան բացառականի տարբերակներից՝ **ի քեզնէ, ի քեզմէ, ի քեզէ, ի քենէ, ի քեզանէ** (Ա 2, 90-93): Իսկ եթե սրանց ավելացնենք նաև ուշ միջնադարում ձևավորված զուգաձևերը (մեզնէ//մեզմէ, մեզնից//մեզանից, քեզնէ//քեզմէ, քեզնից//քեզանից), ապա հարացույցը շատ ավելի խայտաբղետ կլինի: Առանձին դերանունների դեպքում, եթե հաշվի առնենք նաև արմատի հնչյունական փոփոխակների առկայությունը, տարբերակային հոլովաձևերը հասնում են մեկ տասնյակի, ինչպես, օրինակ՝ **իրենք** դերանվան պարագայում՝ **յիրենցնէ,**

իրմնցէ, իրմնցնէ, իւրմնցնէ, իւրմենցմէ, իւրենցէ, իւրենցմէ (Ա 2, 89), ինչպէս նաև՝ **իրենցնէ, իրենցմէ** և այլն:

Կարելի է անմիօրինակության բազմաթիվ այլ օրինակներ բերել միջին հայերենի նաև բայական համակարգից՝ բայի խոնարհման անմիօրինակ ձևերից, շարահյուսական կառույցներից, որոնցում համատեղ գոյակցում են գրաբարից, արևելահայ և արևմտահայ բարբառներից եկած շարահյուսական կապակցման եղանակների ու ձևերի ամենաբազմազան տարբերակներ: Իհարկէ, ճիշտ է նկատված, որ առաջին հայացքից լեզվական իրականությունների որպէս մի խառնակություն ներկայացող միջին հայերենը «ինչքան էլ անցումային մի օղակ լինի», այնուամենայնիվ, «իր հերթին ունի իր քերականական համակարգը» (Ա 2, 300), որ թեև քերականական կարգերը դրսևորվում են հիմնականում հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերին հատուկ միջոցներով, այնուամենայնիվ «միջին հայերենի քերականական կառուցվածքը հանդես է բերում նաև միայն իրեն հատուկ առանձնահատկություններ» (Ա 1, 7): Բայց այս ամենով հանդերձ՝ միջին հայերենը չունի գրական լեզվին հատուկ՝ վերը նշված հիմնական որակները. բավարար չափով մշակված և միօրինակ չէ, չունի դասական կոռ և ամբողջական կառուցվածք և այլն. ունի անցումային շրջանի լեզվին բնորոշ բոլոր հիմնական գծերը՝ անմիօրինակություն, նախորդող և հաջորդող լեզվափոփոխի իրո-

դությունների առատ գործածություն, բարբառային լեզվատարրերի խառնիխուռն և անհամաչափ կիրառություններ, լեզվական նույն իրողության տարբերակային ձևերի փոխանցումներ և այլն:

Այսպիսով՝ հայերենի գրավոր պատմության միջին շրջանի գրական որակումը, ըստ էության, չունի գիտական հիմնավորում. այդ լեզուն չհասավ միասնացման ու նորմավորման անհրաժեշտ աստիճանի, չունեցավ կանոնակարգման այն չափը, որ ունեցան դասական գրաբարը և XX դարի արևելահայերենն ու արևմտահայերենը: Ճշգրիտ բնութագրությամբ՝ այն, իրոք, ոչ թե գրական, այլ գրականացող լեզու էր: Իր այդ հատկանիշներով միջին հայերենը, առանց խիստ մեծ պայմանականության, չի կարող հայերենի զարգացման շղթայում դրվել գրաբարի և աշխարհաբարի կողքին՝ որպես համարժեք կամ հավասարարժեք երևույթ:

2. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԵՆԹԱՇՐՁԱՆ

Ուզում ենք ուշադրություն հրավիրել մի կարևոր հանգամանքի վրա. արևելահայ բոլոր քերականները, ովքեր զբաղվել են հայերենի այսպես կոչված պերիոդիզացիայի հարցերով, ելակետ են ունեցել հիմնականում արևելահայերենի լեզվական նյութի տվյալները: **Գուրգեն Սևակը**, ով գրական հայերենի գիտական շրջանաբաժանման առաջին լուրջ փորձը կատարեց, ի սկզբանե հայտարարում է, որ ինքը «անհրաժեշտ է համարում վերանայել մեր ազգային գրական լեզվի՝ **արևելյան գրական աշխարհաբարի** սկզբնավորման հարցը»: Նրա «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատության մեջ հարցին նվիրված բաժինը հենց այդպես էլ կոչվում է՝ «Արևելահայ գրական լեզվի պատմության պերիոդիզացիա»: Արևելահայ գրական լեզվի բուն պատմությունը նա սկսում է XVII դարից: Մի կողմ թողնելով լեզվաբանի այն վիճահարույց տեսակետը, թե մեր ազգային գրական լեզվի ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, տարբեր լեզուներ են, ինչպես գրաբարը և միջին հայերենը, պետք է նկատել, որ այսօր միանգամայն արդիական է

հնչում նրա այն կարծիքը, ըստ որի՝ գրական հայերենի այդ երկու տարբերակները «իրենց ֆորմացիայի և ակունքների մեծ նմանություններով, փոխադարձ ուժեղ կամ թույլ ներազդեցություններով հանդերձ, ունեն բնույթի ու պատմական ճակատագրի խոշոր տարբերություններ, ուստի և ենթակա են առանձին ուսումնասիրության»¹⁶: Հարցին անդրադարձած մյուս արևելահայ լեզվաբանները՝ Ս. Ղազարյան, Գ. Ջահուկյան, Հ. Մուրադյան, Հ. Կուսիկյան և ուրիշներ, չեն դիտարկում տարբերակված մոտեցման խնդիրը և, որքան էլ տարօրինակ է, չեն քննարկում մաս Գ. Սևակի այդօրինակ մոտեցման պարագան: **Սերոբ Ղազարյանի** աշխատություններում¹⁷ հիմնականում պաշտպանվում է այն տեսակետը, որ գրաբարի և միջին հայերենի սահմանագիծը X դարն է, իսկ միջին հայերենինը և աշխարհաբարինը՝ XVII-ը: Նա չի պաշտպանում այն կարծիքը (Յ. Կարստ և ուրիշներ), թե եղել են միջին հայերենի տարբերակներ, որոնցից կիլիկյան հայերենը բարձրացավ գրականության աստիճանի և պահպանվեց՝ ի տարբերություն մյուսների: Նրա կարծիքով՝ միջին հայերենը մինչև կիլիկյան հայերենը արդեն իր հիմնական հատկանիշներով ուրվագծված էր, պարզապես կի-

¹⁶ Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 15:

¹⁷ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1954, *նույնի՝* Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, *նույնի՝* Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Եր., 1961:

լիկյան շրջանում ավելի մշակվեց ու զարգացավ: «Միջին հայերեն տերմինի տակ,– գրում է Ս. Ղազարյանը,– մենք հասկանում ենք 10-17-րդ դարերի գեղարվեստական, գիտական, այլև պատմական գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին: Լեզվական այդ ընդհանրությունը, ինչպես ամեն մի գրական լեզու, տարբեր ժանրերի գործերի մեջ ունեցել է իր ինքնատիպ արտահայտությունները, որոնք գրական երկի բովանդակության, հեղինակի ըմբռնումների, կրթական մակարդակի ու գրաբարին տիրապետելու աստիճանին համապատասխան ավելի նվազ կամ ուժեղ են ընդգծվել: Սակայն չնայած լեզվական տարրերի բազմազանությանը, միջին հայերենը ունեցել է զարգացման իր ընդհանուր օրինաչափությունները, որոնք այն տարբերել են գրաբարից և որոշել նրա կառուցվածքը իր բոլոր բաղադրիչներով: Միջին հայերենը իր այդ ընդհանուր վիճակով ուրվագծվում է 10-րդ դարից սկսած»¹⁸: Իր տեսակետը հաստատելու համար Ղազարյանը բերում է միջին հայերենը բնութագրող հնչյունական, բառային և քերականական բազմաթիվ վկայություններ ինչպես Ա. Այտընյանի արձանագրած լեզվական փաստերից, այնպես էլ IX-X դարերի հայ մատենագրությունից և ձեռագրերի հիշատա-

¹⁸ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, էջ 92-93:

կարաններից: Գրանք հայերենի նոր շրջափուլի ամենավաղ վկայություններից են՝ միջին հայերեն-աշխարհաբար լեզվակառուցվածքի էական տարբերը, որոնք, սակայն, առավել տեսանելի դարձան և ընդհանուր ճանաչում գտան XII-XIII դարերից սկսած (մեր հետագա շարադրանքում դրանց կանդրադառնանք): **Հովսեփ Կուսիկյանը**, հիմնականում հետևելով Գ. Ջահուկյանի գծած ժամանակագրական սխեմային, կատարում է հետևյալ շրջանաբաժանումը՝ հին շրջան՝ V-XII դարեր, միջին շրջան՝ XII-XVII, նոր շրջան՝ XVII-XIX, նորագույն շրջան՝ XIX-ից հետո¹⁹:

Արևելահայերենի փաստական նյութի տեսանկյունից արված այս դիտարկումներում միանգամայն համոզիչ է ներկայացվում գրաբար - միջին հայերեն - արևելահայ աշխարհաբար շրջանաբաժանումը, քանի որ վերջինը լեզվական որակի էական տարբերություններ ունի նախորդ շրջափուլից: Նույնը, սակայն, չի կարելի ասել գրական արևմտահայերեն և միջին հայերեն հարաբերակցության մասին: Միջին դարերում շատ ավելի հիմնավոր և հետևողական զարգացում ստացավ գրական աշխարհաբարի արևմտահայ տարբերակը: Գրական արևմտահայերենի բոլոր իրողությունները կան միջին հայերենում՝ որպես արևմտահայ բարբառների լեզվական իրո-

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 23:

դություններ, որոնց հիմքի վրա ձևավորվեց միջին հայերեն կոչված փուլի խոսակցական բանավոր և գրավոր տեսակը: Միջին հայերենը, գրաբարից զատ, ձևավորվեց գերազանցապես արևմտահայ բարբառների հիմքի վրա, որոշակիորեն մշակվեց ու զարգացավ այդ բարբառների լեզվական նյութով: Խոսելով կիլիկյան հայերենի մասին, որը, ինչպես գիտենք, միջին հայերենի ամենաբարձր՝ դասական արտահայտությունն է, **Ակնարկներ**-ի հեղինակները արձանագրում են, որ «...Կիլիկյան հայերենը փաստորեն գրի էր առնվում արևմտահայ բարբառների ընդհանրությունների հիման վրա: Հենց սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ այս նույն ժամանակներում Կիլիկիայից դուրս՝ բուն Հայաստանի արևմտյան շրջանների լեզուն, իր հիմնական առանձնահատկություններով այնքան մոտ է կիլիկյան հայերենին» (Ա, էջ 36-37):

Արսեն Այտընյանը «Աշխարհաբար կամ ժողովրդական ստորին լեզուի մը գոյութիւնը» հաստատող տարրերը փնտրում է V-VII և հետագա դարերի հայ մատենագրության մեջ: VII դարը նկատում է սահմանագիծ հին և նոր լեզուների՝ գրաբարի և «նախնեաց ռամկօրէնի» միջև. «Այս դարն իրօք դարագլուխ մըն է հայերէն լեզուին պատմութեանը մէջ,– գրում է նա,– մանաւանդ թէ սահմանագլուխ՝ հին հայերէնի, որուն գրաբար կ'ըսենք՝ եւ հին աշխարհաբարի մը մէջտեղը. այսինքն այն աշխարհաբարին զորն որ գործոյս ընթացքին մէջ **Նախնեաց ռամկօ-**

րէն կը կոչենք»²⁰: Ի դեպ, իր աշխատանքի մեջ Այտըն-յանը **աշխարհաբար, ստորին դարուց ռամկօրէն** կամ **նախնեաց հայերէն** տերմինների փոխարեն գործածում է նաև **միջին հայերեն, միջին հայերեն լեզու** տերմինները²¹: Արևմտահայ լեզվաբանը այս կարծիքին է հանգում նախնյաց մատենագրական նյութի ուշադիր և հետևողական քննությամբ: Ըստ որում, քննական աղբյուրներում, որոնք հիմնականում VII-XII, նույնիսկ V դարի մատենագրության նմուշներ են, հետազոտողը փնտրում և հանգամանորեն ներկայացնում է արևելահայերենի և արևմտահայերենի համընկնող և կամ միայն արևմտահայ աշխարհաբարին բնորոշ լեզվատարբեր՝ *նորանոր բաներ՝ խիստ՝ փոխ. կարի, մոտեցան, փոխ.՝ մերձեցան, փլան, փոխ.՝ կործանեցան, շատ, փոխ.՝ բազում, կամ՝ աղէկ, գէշ, աղուոր, ուրիշ, ճիտ, ստեն, հանաք, կպչիլ, ուզել, խղճալ, մտիկ ընել* և այլն, *բայերու նոր շևեր՝ նեղացար* (նեղեցար), *չարծնուս* (ոչ պրծանիս), *հոյովակիան շևեր՝ մեզնէ, մարդէն, ջրէդ, բերանէն, ձորակով, սրտով, ի գետերէն եւ նաւերէն*, «*ի և զ նախդիրներու անհետանալու սկիզբն տեսանք*», «*համաձայնութեան նկատմամբ գրաբարէն խոտորմունքն առհասարակ*», **ոչ և չ** ժխտականներից երկրորդի ակտիվ կիրառությունը, **որ**-ի գոր-

²⁰ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 121:

²¹ Նույն տեղում, էջ 156:

Ժամվելը **գի** շաղկապի նշանակությամբ և այլն: Ի վերջո, քննելով նախնյաց մատենագրության լեզվական նյութը, Ա. Այտընյանը գալիս է այն համոզման, որ «հիմնական աշխարհաբարին (նկատի ունի XIX դարի կեսերի արևմտահայերենը – *Յու. Ա.*) հետ ըլլալու համեմատութիւնը կը դիւրացընեն՝ միայն երբէմն երբէմն երեսան ելած եւ համարձակ գործածուած նորագոյն ձեւերն ու բառերը, որոնցմով կը տեսնուի որ գրեթէ հիմնական լեզուն ըստ էական մասին ձեւացած էր ասկէ իբր 7 դար յառաջ»²²: Նա նոր հայերենի ձևավորման և հնից գատվելու ժամանակաշրջանը փաստորեն հասցնում է XII-XIII դարեր²³: **Նախնեաց հայերէնի** ամենաբնորոշ գծերից է համարում անմշակությունը և անմիօրինակությունը: Ինչպես արդեն ասվեց, լեզվաբանի ներկայացրած փաստական հարուստ նյութը վերաբերում է առավելապես արևմտահայ աշխարհաբարին: Ներկայի **կու** (**կը**, **կ’**) մասնիկի գործածությունը Այտընյանը համարում է նոր լեզվի մեջ «գլխաւոր կերպարանափոխութիւն յառաջ բերող», այդ լեզուն գրաբարից գատող և առանձին կերպով աշխարհաբարի դրոշմ տվող հատկանիշներից²⁴: Աշխարհաբարի ձևավորման և զարգացման վերաբերյալ Այտընյանի գիտական հայացքների ամբողջ տրամաբանությունը հան-

²² Նույն տեղում, էջ 151:

²³ Նույն տեղում:

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 151-152:

գում է այն մտքին, որ միջին հայերեն կոչված շրջափուլի ձևավորման պատմությունը ի վերջո արևմտահայ աշխարհաբարի առաջացման ու կազմավորման պատմությունն է: Այդ միտքը արևմտահայ քերականագետը ձևակերպել է շատ պարզորոշ ու հստակ. ավարտելով գրաբարի քերականության համառոտ բնութագրությունը՝ նա գրում է. «Այս իբր հինգ դարու միջոցի գրաբարին տեսութենէն ետքը դառնանք **աշխարհաբար լեզուին** պատմութեանը (ընդգծումը մերն է - Յու. Ա.): Միջին դարուն վերջերը և մասնաւորապէս Բագրատունեաց ժամանակները* երբ արդէն մեր գրաբարը իրենց ալ իրօք գրաբար էր, ձևացած էր կերպաւորեալ աշխարհաբար լեզու մը. կամ մանաւանդ դարերով ձևացած աշխարհաբարն սկսած էր նաև իբրև աշխարհաբար ի գիր առնուիլ. լեզու մը՝ որ ժամանակին մատենագրութենէն բոլորովին տարբեր բնութիւն ու կազմութիւն ունի»²⁵:

Հանգամանորեն քննելով կիլիկյան շրջանի միջին հայերենի լեզվական փաստերը՝ **Յոզեֆ Կարստը** վստահաբար հանգում է այն եզրակացության, որ դրանք իրենց հնչյունական վիճակով և քերականությամբ բնորոշ են հայ բարբառների արևմտյան խմբին: «Պատմական այդ ժամանակի համար Կարստը նույնիսկ ընդունում է մի-

* Նկատի ունի 8-10-րդ դարերը, որ անվանում է **միջին դարեր**՝ «գրաբար մեռելա լեզու և կերպաւորեալ աշխարհաբար հայերէն»:

²⁵ Նույն տեղում, էջ 140:

ջին արևմտահայերեն մի խոսվածքի գոյությունը, որը եղել է եթե ոչ ամբողջ արևմտյան խմբի, ապա գոնե նրա բարբառների մի մասի մայրը» (Ա 1, 15):

Մանուկ Աբեղյանը հայերենի պարբերացման խնդրին հատուկ չի անդրադարձել: «Հայոց լեզվի տեսության» ներածության մեջ նա փորձել է համառոտակի ուրվագծել գրավոր հայերենի անցած ճանապարհը՝ հիմնականում հետևելով ընդունված կարծիքներին: Նա **հին և միջին գրական** լեզուների սահմանագիծ է համարում XII-XIII դարերը, իսկ **նոր գրական լեզվի** սկիզբը՝ XIX դարը՝ արևմտյան և արևելյան ճյուղերով²⁶: Բուն միջին դարերի մատենագրության լեզվական որակը բնութագրելիս Աբեղյանը գուսանական երգերի առիթով հետաքրքիր դիտարկում է անում միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի մասին. միջին հայերենը, գրում է նա, «իր հնչյունների դրությամբ և քերականությամբ պատկանում է արևմտյան բարբառներին և համարվում է Կիլիկիայում խոսված բարբառը»²⁷:

Հրաչյա Աճառյանը հստակ գծված շրջանաբաժանում չի տալիս, չի անդրադառնում դրա սկզբունքներին, այսուհանդերձ լեզվի պատմական զարգացման և կրած փոփոխությունների վերաբերյալ նրա արտահայտած կար-

²⁶ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 58:

²⁷ **Մ. Աբեղյան**, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Եր., 1972, թիվ 2-3, էջ 225:

ծիքների տրամաբանությամբ հայերենի զարգացման պատմության մեջ հստակորեն առանձնացվում է երկու շրջափուլ՝ **գրաբար** և **աշխարհաբար**: Միջին հայերենը և բարբառները դիտվում են որպես տարատեսակություններ և աշխարհաբարի ձևավորման ու զարգացման նշանաձողեր: Չարգացման փուլերը առանձնացնելիս Աճառյանը նշում է, որ «Ինչպես գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար»²⁸: Միայն խիստ պայմանականորեն նա **գ** նախդիրի բացակայությունը դիտում է որպես աշխարհաբարը միջին հայերենից զատող նշան: Եվ ուշագրավն այն է, որ իբրև այդ կարծիքի հակափաստարկ բերում է ոչ միայն տեքստի հեղինակի՝ գրաբարագիտության կամ գրաբարին հակված լինելու հանգամանքը, այլև այն, որ **գ** նախդիրի հաճախակի գործածությունը բնորոշ է արևմտահայ մի շարք բարբառների՝ Մուշի, Տիգրանակերտի, Պոլսի և այլն: Սա մեկ անգամ ևս վկայում է, որ միջին հայերեն և արևմտահայ աշխարհաբար սահմանաբաժանման միջև նշված փաստարկը, ըստ էության, լուրջ ապացույց չի կարող լինել: Աշխարհաբարի հնագույն նմուշները Հ. Աճառյանը փնտրում է XIV դարի մատենագրության մեջ և արձանագրություններում: Ա. Այտրընյանի հետևողությամբ՝ հնագույն նմուշ է համարում

²⁸ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 441:

Բջնիի արձանագրությունը (1358 թ.): Նշվում են նաև այլ օրինակներ: Ամիրդովլաթ Անասիացու «Անգիտաց անպետը» (1478 թ.) երկի մասին գրում է. «Այստեղ ավելի լավ է գգում մարդ աշխարհաբարի շունչը»²⁹:

Արևմտահայերենի ձևավորման հարցերով զբաղվող այլ լեզվաբաններ, հետևելով Այտընյանի նշած շրջանաբաժանմանը, աշխարհաբարի ձևավորման սահմանները տանում են միջին դարերի սկիզբ: XI դարից սկսված թուրքաթարական բարբարոսական արշավանքները, ապա XV դարից օսմանյան թուրքերի հաստատած տիրապետությունը ծանր պայմաններ ստեղծեցին նաև լեզվի ու մշակույթի պահպանման համար. ընդհատվեց հայերենի բնականոն զարգացումը: Ներկայացնելով պատմաքաղաքական այդ հանգամանքները՝ արևմտահայ աշխարհաբարի պատմության հետազոտողներից **Տ. Շահբազյանը** հանգում է այն եզրակացության, որ պատմաքաղաքական բարենպաստ պայմաններում լեզվի բնականոն զարգացումով ամբողջ հայության համար մենք կունենայինք մշակված ու կատարյալ մի լեզու տակավին XIV-XV դարերում. «Ուրեմն այդ բարբարոսական արշավանքները,– շարունակում է նա,– մեր լեզուն կանգնեցրին իր էվոյուցիոն կանոնավոր զարգացման փլուզումների առաջ և առնվազն 3-4 դարով հետաձգեցին մեր

²⁹ Նույն տեղում, էջ 442-443:

աշխարհաբարի առաջացումն ու վերջնական ձևակերպումը, տեղի տալով բազմաթիվ բարբառների ու դրանց հետ կապված լեզվական իրակությունների յուրահատուկ բազմաթիվ ու բազմապիսի փոփոխությունների»³⁰:

Արևմտահայ աշխարհաբարի ծագման ու զարգացման հարցերը քննարկելիս **Հրանտ Թորոսյանը** պաշտպանում է այն տեսակետը (Ղ. Ալիշան, Ա. Այտընյան, Ղ. Հովնանյան), որ բուն միջին հայերենի («Կիլիկեան ռամկօրէն»-ի) ժամանակաշրջանը XI-ի վերջերից մինչև XIV դարի վերջերն ընկած ժամանակահատվածն է: «Անիկա փոխանցման շրջանի լեզու մըն էր,– գրում է Թորոսյանը,– որ հայ բանասէրներ – Ալիշան, Այտընեան, Յովնանեան **նախնեաց ռամկօրէն** կոչած են, նաեւ, միջին հայերէն, այսինքն՝ դասական շրջանի եւ արդի շրջանի միջեւ տարածուող ժամանակամիջոցի բարբառը: Այս բարբառը իբրեւ գրական լեզու գործածուած է բազմաթիւ դարեր (Ժ.էն ԺԵ. դար), երկար շրջան մը՝ որ մօտաւորապէս կը տարածուի Տարոսի մէջ Ռուբինեան իշխանութեան տեղաւորուելէն (1081) մինչև Կիլիկեան թագաւորութեան վախճանը (1375)»³¹: Հր. Թորոսյանը ակնհայտորեն տարբերակում չի դնում **կիլիկեան ռամկօրէնի** գրական և

³⁰ **Տ. Շահբազյան**, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Եր., 1963, էջ 56-57:

³¹ **Հր. Թորոսեան**, Արևմտահայ աշխարհաբարի ծագումը եւ զարգացումը, Եր., 1961, էջ 22:

ոչ գրական (բարբառային) որակների միջև, չի դիտարկում նրա նորմավորված գրական լեզու լինելու հանգամանքը: Ինչ վերաբերում է արևմտահայ աշխարհաբարի ծագման ու ձևավորման հարցին, հետազոտողը նոր շրջափուլի սկիզբը համարում է XV դարը. արևմտահայերենը, ըստ նրա, միջին հայերենի անմիջական ժառանգորդն է: Ավելին: Այն իրականում ոչ թե մի նոր՝ էապես տարբեր լեզվական որակ էր, այլ ընդամենը իր նախորդի՝ **կիլիկեան ռամկօրեն**-ի՝ վերակենդանություն առած լեզվավիճակը կամ տարբերակը: «Կիլիկեան ռամկօրենն ալ մեռաւ իր կարգին,– գրում է նա:– Բայց քիչ ատեն ետքը վերակենդանացաւ ուրիշ ձեւի տակ: Այլեւայլ գաւառականներէ զանազան տարրեր առնելով, ծնունդ տուաւ արեւմտեան հայերէնին, որ, սակայն, Ի. դարու իր կատարելութեանը չհասած, անցաւ անկերպարան զանազան փուլերէ Անատոլոյի գաւառներուն մէջ, ԺԵ. դարէն մինչեւ ԺԹ. ի վերջերը»³²:

Այլ առիթով գրաբարից աշխարհաբար անցումը նկարագրելիս Թորոսյանը միջին հայերենի՝ որպէս «փոխանցման շրջանի լեզու»-ի մասին չի խոսում: (Այդ մասին՝ իր տեղում):

Արևմտահայ աշխարհաբարի ձևավորման հարցերին մեր օրերում անդրադարձել է նաև **Վանուհի Աճեմյանը**: Քննու-

³² Նույն տեղը, էջ 31:

թյան առարկա են դարձել արևմտահայերենի ձևավորման և գործածության յուրահատկությունները 1700-ից մինչև 1870 թ. ընկած ժամանակաշրջանը: Հեղինակը իր առջև խնդիր չի դրել ուսումնասիրելու արևմտահայերենի լեզվատարրերի ձևավորման կամ առաջացման պատմությունը: Չի անդրադառնում նաև միջին հայերենի կամ մեր գրավոր լեզվի պատմության միջին շրջանի առանձնահատկություններին և արևմտահայ աշխարհաբարի հետ ունեցած առնչություններին, այսինքն՝ հարցերի և հարցադրումների այն շրջանակին, որը մեր հետաքրքրությունների ոլորտում է:

Ակնհայտորեն հաջողված այդ աշխատանքը մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից ուշագրավ է այլ առումներով: XVIII դարասկզբի արևմտահայ աշխարհաբարի լեզվավիճակի նկարագրությունը (գլուխ երկրորդ՝ «Գրական արևմտահայերենի կազմավորման ընթացքը 1700-1840 թթ.») աշխատանքում օբյեկտիվորեն ներկայացվում է լեզվական այնպիսի փաստերով, որոնք միջին դարերում լեզվագործածության մեջ արդեն արձանագրվում էին: Իսկ դրանք առավելապես գրաբարից շեղվող և միջին հայերենում ու արևմտահայերենում համընկնող լեզվական իրողություններ են, որոնք վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն, ինչպես, օրինակ՝ բազմավանկ բառերում երկու բաղաձայնների միջև շեշտից դուրս գտնվող

ա, ե, ո, ու ձայնավորների սղում (գողանալ→գողնալ, կատաղիլ→կատղիլ, հասկանալ→հասկնալ, պտուտիլ→պտտիլ, ուղարկել→ղրկել), բառասկզբում և բառամիջում մի քանի բաղաձայնների միջև ընկած ձայնավորների հնչյունափոխության դեպքեր (**ա**→**ը**` ասել→ըսել, անկանիլ→ընկնիլ, **ե**→**ի**` երիկուն→իրիկուն), բաղաձայնների տեղաշարժ գրության կամ արտասանության մեջ (ուրագ→[ուրաք], շոգի→[շոքի]), դրափոխություն և հնչյունների հավելում (սովորիլ→սորվիլ, կանաչ→կանանչ, մրսիլ→մսիլ), դերանունների հոլովման համակարգում առկա են գրաբարից շեղվող ձևեր, որոնք գործածական են միջին գրական հայերենի շրջանից (ամենեն, մեզի, քեզի, ձեզի, ինձմով, քեզմով), ներկան կազմվում է միջին գրական հայերենում սովորական **կու** (**կը, կ**) նախամասնիկով (կու գամ, կը խօսիմ, կը վագեմ, կ'ըսեմ, կ'ընեմ), վաղակատարը վերջանում է **եր**-ով (երգեր, կարդար) և բազմաթիվ այլ իրողություններ³³: Բերված լեզվական փաստերը մեկ անգամ ևս վկայում են, որ գրական արևմտահայերենի ձևավորման առաջին դար փոխանցվեցին այնպիսի լեզվատարրեր, որոնք նախորդ դարերում արդեն հիմնականում ձևավորված էին: Հետագա ժամանակաշրջանը (XVIII-XIX դարերը) դրանց մշակման ու կանոնակարգման ժամանակաշրջանն է:

³³ Տե՛ս **Վ. Աճեմյան**, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Եր., 1971, էջ 38-102:

Քննարկվող ուսումնասիրությունը սկզբունքորեն կառուցված է հենց այդ տրամաբանությամբ. քննարկումների առանցքում ընկած են ոչ թե առհասարակ աշխարհաբարի, այլ աշխարհաբարի գրական տարբերակի ձևավորման հարցերը: Հեղինակն ինքը շարադրանքում հաճախ է ընդգծում այս միտքը: Այդ են վկայում նաև աշխատասիրության խորագիրը («Գրական արևմտահայերենի ձևավորումը») և ենթախորագրերը («Գրական արևմտահայերենի կազմավորման...», «Գրական արևմտահայերենի բառապաշարի...», «Գրական արևմտահայերենի քերականական կանոնավորման ընթացքը 1840-1870 թթ.»): Մի կարևոր հանգամանք ևս. ինչպես հարցին նվիրված գրեթե բոլոր աշխատանքներում, այնպես էլ այստեղ աշխարհաբարի ձևավորման ու զարգացման, նաև գրապայքարին առնչվող խնդիրները քննարկվում են գրաբար-աշխարհաբար տարբերությունների և միջին հայերեն-արևմտահայերեն ընդհանրությունների համատեքստում:

Գրավոր գրական հայերենի շրջանաբաժանման և մասնավորապես միջին հայերենի լեզվական որակի նկարագրության, միջին հայերեն-բարբառ, միջին հայերեն-արևմտահայերեն առնչությունների վերաբերյալ հարցերին **Գևորգ Չառուկյանը** տարիներ անց անդրադարձել է նաև այլ աշխատանքներում: Իր իսկ բնութագրությունները հավանաբար չեն գոհացրել լեզվաբանին. անհրա-

Ժշտությունը կար նոր փաստերի, մասնավորապես բարբառագիտական հետազոտությունների արդյունքների հիմքի վրա և նոր հիմնավորումներով վերահաստատելու տեսակետներ և ճշգրտելու միջին հայերենի լեզվական որակի ինչ-ինչ հատկանիշներ:

Ուսումնական և մեթոդաբանական առումներով թերևս հարմար տարբերակ է միջին հայերեն անվանումը: Ընդունված տեսակետներից մեկն այն է, որ միջին հայերենը հին և նոր հայերենների միջև ընկած անցման ժամանակաշրջան է, որ «հավասարապես տարբերվում է հին և նոր հայերեններից և ներկայացնում է լեզվական հատուկ շրջան» (Յ. Կարստ)³⁴: Գ. Ջահուկյանը միջին հայերեն անվանումը արդարացված է համարում տրամաբանորեն, ժամանակագրորեն և պատմականորեն, եթե մենք իրոք այդ անվանումով նկատի ենք առնում միջին շրջանի տարբերակների ամբողջությունը: Առավել ճշգրիտ լինելու համար նա առաջարկում է հայոց լեզվի զարգացման այդ շրջափուլը կոչել արդեն իսկ շրջանառության մեջ եղած անվանումով՝ «հայերենի գրավոր պատմության միջին շրջան»³⁵:

Այս բոլորից հետո առաջնային ու կարևոր է մնում գրավոր հայերենի զարգացման շղթայի մեջ միջին շրջանում

³⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Միջին հայերենը որպես լեզվական որակ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1993, թիվ 1, էջ 15-16:

³⁵ Նույն տեղում, էջ 16:

գործառվող լեզվի դերի ու նշանակության խնդիրը. «Արդ՝ միջին հայերենը միջին օղակ է հին հայերենի և երկու նոր հայերենների՝ միջև, թե՞ հին հայերենի և դրանցից մեկի, մասնավորապես արևմտահայերենի միջև»³⁶: Բարբառների բազմահատկանիշ դասակարգման կապակցությամբ կազմված աղյուսակի մեջ Ջահուկյանը մտցրել և այդ հատկանիշներով գնահատել է կիլիկյան միջին գրական հայերենը, արևմտահայերենը և արևելահայերենը: Մտացված վիճակագրական տվյալները միջին հայերեն և արևմտահայերեն փոխհարաբերության վերաբերյալ շատ հետաքրքրական են: «Արևմտահայ գրական լեզուն,— կարդում ենք եզրակացության կետերից մեկում,— ինչպես և սպասելի էր, երկու անգամ ավելի մոտ է միջին գրական հայերենին, քան արևելահայ գրական լեզուն, առանձնապես աչքի ընկնող են վերջիններիս քերականական տարբերությունները. սա նշանակում է, որ **արևմտահայ գրական լեզուն հանդես է գալիս որպես միջին գրական հայերենի ժառանգը....**» (ընդգծումը մերն է – Յու. Ա.)³⁷:

Բերված կարծիքներն ու քննարկումները վկայում են, որ հետազոտողների շատ որոշակի մասի համոզմամբ միջին դարերում ձևավորվող լեզվական որակը սերտ կապի մեջ էր արևմտահայ բարբառների հետ, ձևավորվեց

³⁶ Նույն տեղում, էջ 14:

³⁷ Նույն տեղում, էջ 17:

այդ բարբառների հիմքի վրա և իր հերթին հիմք հանդիսացավ արևմտահայ աշխարհաբարի ձևավորման ու զարգացման համար՝ որպես նոր գրական լեզվի նախավիճակ:

Միջին հայերեն–արևմտահայերեն սերտ կապի և լեզվական ակնհայտ ընդհանրությունների մասին է վկայում մեր լեզվի երկու ճյուղերը «սահմանազատող» հնչյունաչին, բառային և քերականական փաստերի ամենապարզ համադրությունն անգամ:

Այսպես: Միջին հայերենում առկա է գրական արևմտահայերենին հատուկ **հնչյունական-հնչյունափոխական բոլոր երևույթների աստիճանական զարգացումը:** Ըստ որում, դրանք ձևավորվում են կա՛մ գրաբարի ուշ շրջանում և կա՛մ վաղ միջնադարում: Ինչպես, օրինակ՝ **ա-**ի սղումը կամ անկումը բառական ուղիղ ձևերում՝ **հասկնալ, հավնել, մեռնիլ, ճանչնալ, սպաննել** (XIII դ.) (Ա 1, 74), կամ՝ «Վասն զի մաղձն **շատցաւ** ի յայս անդամս», «...և այնկից ի վեր **թուլցաւ**», «...և զիս **մոռցան**» (Ա 1, 334), **ու-**ի անկումը **ուղարկել** բառում՝ **դրկել** (XV դ.) (Ա 1, 80), **ե-**ի անկումը **գիտենալ** բառում՝ **գիտնալ** (Ա 1, 82), **այ**→**ա** պատմական փոփոխությունը՝ **զաղբարն** (XI դ.), **վար**←**վայր, աս**←**այս**, որ ավելի լայն տարածում է ստանում XIV-XV դարերում՝ **այլ**→**ալ, այն**→**ան, այսր**→**ասոր, այնր**→**անոր** (Ա 1, 91-92), հրամայականում գրաբարյան **-եա** վերջավորության փոփոխությունը է ձայ-

նավորի՝ **խառնեա**→**խառնէ**, **մաղեա**→**մաղէ** (XII դ.), **սիրեա**→**սիրէ** (XIII դ.) (Ա 1, 100), արդեն մի քանի բառերում բառասկզբում արձանագրվում է **ա**→**ը** (անկանել→ընկնիլ, անկողին→ընգողին), որը XV դարից մատենագրության մեջ ներթափանցում է արևմտահայերենին հատուկ **ա**→**ը** հնչյունափոխության այլ օրինակներով՝ **ընել** (←անել←այնել←առնել), **ըսել** (←ասել) (Ա 1, 76): XII-XIII դարերի մատենագրության մեջ համընդհանուր երևույթ է ձայնեղ հպականների շնչեղ խլացումը՝ **սուք**, **սարկաւաք**, **փափաք**, **հոքս** (Ա 1, 116), որի դրսևորումները Գ. Ջահուկյանը արձանագրում է տակավին V-XI դարերի ձեռագրերի հիշատակարանների լեզվում. այն արտահայտվում է մի շարք բառերի գրության մեջ, ինչպես՝ **յարհանդէ**, **մանգունք**, **ընգերանցն**, **դաքաղ**, **երկրպաքեցաւ**, **քահակցի**, **Սարքսի** և այլն³⁸: Ս. Ղազարյանը միջին հայերենի հնչյունաբանությանը նվիրված իր աշխատության մեջ բերում է ձայնեղ և խուլ բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխության բազմաթիվ օրինակներ X դարի ձեռագրերի հիշատակարաններից (աստուածամարդ, ցանգալի, ընդմեցայ, վաթթար, Դաղէոս, Թաւթի, Բարթաղէմէոս և այլն) և XII-XIII դարերի մատենագրությունից ու վիմագիր արձանագրություններից (խաքանէ, զանկակատանս, ընգալա, անգցի, ընչս, սարոն, պա-

³⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 12:

տարաք և այլն)³⁹, միջին հայերեն-արևմտահայերեն համակարգերին հատուկ հնչյունափոխական այլևայլ բազմաթիվ երևույթներ՝ հնչյուն(ներ)ի անկում (արժան - աժան, ջրաղաց - ջաղաց, ինքն - ինք/զինք), հնչյուն(ներ)ի ամփոփում և հավելում (առնել - ընել, կանաչ - կանանչ, դու - դուն) (Ա 1, 143-162), դրափոխություն (փետուր→թեպուր, թեփուր), տառադարձումներ (Ասլղարիսլ → Աթղարիթ, Աթուսահլ → Ասուսահլ, Աթլ հասան → Ասլ հասան)⁴⁰ և այլն:

Քառային կազմի ընդհանրություններից է այն, որ գրական արևմտահայերենին փոխանցվեցին բուն միջինհայերենյան մի շարք բառեր: Ամենից առաջ նկատի ունենք այդ բառապաշարի բնիկ բառերի շերտը, որը գործածվել է գրաբարի խոսակցական տարբերակում, բայց մեզ է ավանդվել միջին հայերենի գրական հուշարձանների շնորհիվ⁴¹ և ամենայն հավանականությամբ մեծ մասով արևմտյան բարբառների սեփականությունն է, ինչպես՝ **մորճ** – ծառի դալար ճյուղ, **սարբինայ** – խաղողի թառմա, **խածնել** – կծել, **սկրդել** – քերել, **սոթթել** – հավաքել, **քշտել**, **գոց** – փակ, **աղէկ** – լավ, **ցանցառ** – նոսր, **սուղ** – թանկ, **հեղ** – անգամ, **հոս** – այստեղ, **նէ** – եթէ: Քիչ չեն

³⁹ Տե՛ս **Ս. Ղազարյան**, Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, էջ 97-98:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 97:

⁴¹ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 63-73:

նան միջին հայերենից ավանդված իմաստափոխությունները՝ **հատնիլ** (←հատանիմ) գրք. կտրվել, միջ. հյ. նան՝ վերջանալ, **ցաթիլ** (←ցայտել) գրք. թռչել (ջրի), միջ. հյ. նան՝ ծագել (արևի, լուսի), **բարակ** գրք. նուրբ, միջ. հյ. նան՝ մանրամասն, ինչպես նան՝ **քամի** – հողմ, **մրափ** – քուն, **կարգել** – ամուսնացնել, ուշադիր, **տեսնել** – իմանալ, գիտենալ և այլն: Մատենագրության մեջ վկայված են արևմտահայերենը արևելահայերենից և գրաբարից տարանջատող բառային այլ միավորներ՝ **հոս**, **հոն**, **քով**, **ատեն**, **աղվոր** (XII-XIII դդ.) և այլն:

Միջին հայերեն-արևմտահայերեն կապի և ընդհանրության դրսևորումները ակնառու են **ձևաբանական մակարդակում**: Ձեռագրերի հիշատակարանների լեզվում և գրավոր մատենագրության մեջ հանդիպում են միայն միջին հայերենում և արևմտահայերենում համընկնող՝ գոյականի հոգնակի սեռականներին բնորոշ (կամ դրան մոտ) կազմություններ՝ **հայրերուն**, **ճորտերուն** (տե՛ս ԺԳ, 19), «Յաչաց լուսոյդ զձեռդ լուս, **Ականջներուդ** դուռըն չի կայ»⁴²: XIII դարի հիշատակարաններում վկայված են բացառական հոլովի կազմության մեջ **ի** նախդիրի անկման գգալի թվով օրինակներ. ձևավորվում են միջին հայերենում և արևմտահայերենում համընկնող հոլովական կազմություններ՝ **կոչեցին երկրէն իւրեանց**, **հգաւ-**

⁴² «Հայ դասական քնարերգություն», Եր., 1987, էջ 112: Այստեղևս շարադրանքում՝ ՀԳ-Բ, և էջը:

րայ երկրէն Խաչինոյ, ոչ որ իշխեսցէ մարդկանէ (ԺԳ, 34): **-ուֆիւն** ածանցով բառերի բացառականի աննախդիր կազմությունները, որոնք ձևավորվում են սեռական-տրական հոլովի հնչյունավոխված (**եա→ե**) հիմքից, ամբողջությամբ համընկնում են արևմտահայերենի համապատասխան հոլովածներին՝ իր **արքայութենէն**, տեսանէ **աւտարութենէ** իր գաւառն (ն. տ.):

Միջին հայերենում առաջանում է նորակազմ **-վան** հոլովումը. ներառելով իմաստային ընդհանուր հատկանիշով բնութագրվող բառեր (օրուան, իրիկուան, վաղուան, տարուան, ցորեկուան և այլն)՝ այն ամբողջությամբ համընկնում է արևմտահայերենի համապատասխան ձևերին: Արևմտահայերեն ձևերի գործածություն է արձանագրվում դերանվանական հոլովման հարացույցում «**Քեզի** բերեմ հայու դրստրիկ» (ՀԴՔ, 69), «Հաստատեցէք զձեզ հետ **ինձի**» (ՀԴՔ, 85), «Ասցի. Հոգով հիւանդ եմ, ըզքեզ բժիշկ **ինձի** գտա» (ՀԴՔ, 94), «Որ տէրն այնէ **մեզի** վճար» (ՀԴՔ, 119): Շատ բնորոշ օրինակներ են վկայված բայական համակարգում. վաղակատար դերբայը, **-ել**-ով ձևերին գուգահեռ, որը գրաբարի անցյալ դերբայի զարգացումն է (**-եալ→-ել**), ստանում է **-եր** վերջավորությունը՝ **լ→ր** ձայնորդների հնչյունավոխությունը՝ «Իրք մի կայ ու ինքն է ջրբեր, Հանց գինեխում մարդ **չէ տեսեր**», կամ՝ «Ի յերկնաւորաց դասուց սաղայել զերեսն **եր շրջեր** Ի յերկնից անդունդս **իջեր** Ի ի լու-

տյն խաւար **մնացեր...**», «Դիւանէնն ասէ, այս ջերմանս պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին **տազնապեր և տաքցեր է**, և իր տաքութենէն գայց ջերմս յերեսն է բերել» (Ա 1, 308-309), որպէս քերականորեն ամբողջացած երևոյթ՝ հարակատարը հանդես է գալիս նաև իբրև ժամանակակերտ դերբայ՝ «Ուղիղ ճամփէն **են մոլորած**, Եւ յանիհուն ծովս **են անկած**, Ի վիհ մեղացս **են գորած**. Չարթո՛ զիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց»⁴³, կամ՝ «Ամենայն իրք, որ ինքն աչօք է **տեսած**, Հաւատով հեռաւորն ի ձեռն է **եկած**. Յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն **են գոված**, Յաշխարհիս հաւատով յերկինքն **են ելած**» (Ա 1, 310-311): Ի դեպ, «Ակնարկներ...»-ում կարծիք է արտահայտվում, որ միջին հայերենում հարակատար ժամանակներն ամբողջությամբ չեն նույնանում արևմտահայ գրականի հարակատար ձևերի հետ, քանի որ միջին հայերենում ներգործական սեռի բայերից հարակատար ժամանակներ չեն կազմվում, և որ «հարակատար դերբայը ներգործական սեռի բայերի դեպքում արտահայտում է կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպային դրսևորման» (տե՛ս Ա 1, 311): Մեր ձեռքի տակ եղած և հենց «Ակնարկներ...»-ում բերված որոշ բնագրային օրինակներում, սակայն, հանդիպում են գործածություններ, որոնց վերաբերյալ հազիվ թե «որոշակիորեն չի

⁴³ **Հովհաննես Երզնկացի**, Հայ քնարերգության մատենաշար, Եր., 1986, էջ 58:

կարելի պնդել», որ դրանք ներգործական սեռի իմաստ ունեն, ինչպես՝ «Ձինչ աշխարհը դաշինք ու ուխտ կա դրած, Ամենին կապն ամուր հաւատն **է դըրած**: Ամենայն իրք, որ ինք աչօք **չէ տեսած**, հաւատով հեռաւորն ի ձեռն է եկած. յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն **են գոված**, յաշխարհէս հաւատով յերկինքն են ելած» (Հովհաննէս Երզնկացի, 68), «...Ձերդ լոկնայ մարդն ջրով, որ **խառնած է** յինքն տաք իրք» (Մխիթար Հերացի) (տե՛ս Ա 1, 331): Այլ աշխատություններում, հաստատելով այդպիսի կառույցներում կրավորականության իմաստի գերակշռության փաստը, բերվում են նաև հազվադեպ օրինակներ՝ չեզոք սեռի (այդ թվում՝ կրավորակերպ) բայերի («**այլակերպած էր** և **հեռացած** ի հին հայ բառէն, արիւնակն **կորած էր**») և բացառիկ դեպքեր՝ բայի բուն ներգործական իմաստով գործածությամբ՝ «քանզի այլն գրած էր» (=ուրիշն էր գրել), ինչպես նաև վաղակատար դերբայի իմաստային կիրառությամբ՝ որպես ձևի կամ ժամանակի պարագա՝ «գգոհացողականն մատուցած (=մատուցեալ «մատուցելով») Աստուծոյ արինութիւն» (ԺԳ, 87)⁴⁴: Հարցի վերաբերյալ անդրադարձ կա նաև «Հայերենագիտական բառարանում»: Նշվում է, որ հարակատարի վերաբերյալ շրջանառության մեջ դրված այդ կարծիքը չի հաստատվում հավաստի տվյալներով. «Ըստ որոշ հայերենագետների,– կարդում ենք բառարանում, – **-ած** մասնիկով այս

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 68:

դերբայը նախապես միայն կրավորական նշանակություն ուներ, բայց այդ դիտողությունը հաստատելու համար նրանք հիմնավոր փաստարկումներ չեն անում»⁴⁵: Բոլոր դեպքերում, բերված օրինակները վկայում են, որ ինչպես արևմտահայերենում, այնպես էլ միջին հայերենում հարակատարը հանդես է գալիս որպես ժամանակակերտ դերբայ ոչ միայն կրավորական, այլև ներգործական ու չեզոք սեռի բոլոր բայերի հետ՝ անկախ նրանից, որ արևմտահայերենում առավելապես ներգործական սեռի բայերի հետ այդ ձևերն արտահայտում են վաղակատարի և անցյալ վաղակատարի նշանակություն:

Սովորական է և տիրապետող օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի **լ** ձայնորդի՝ **ր**-ի հնչյունափոխված ձևով սահմանական ներկայի կազմությունը՝ **չես լըսեր, չես երթար, չի ընկնիր, չի մնար, չես ուրանար** (XIII դ.), որը արևմտահայ գրականում ընդհանուր և միակ ձևն է. միջին հայերենի ուսումնասիրողները այս առիթով դարձյալ պիտի արձանագրեին, որ «Արևմտահայ գրականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին: Նույնիսկ **ի** խոնարհման բայերի անցյալ անկատարի ժխտականի **ի**→**է** հնչյունափոխությամբ՝ **չեր փախչեր**» (Ա 1, 320): Միջին հայերենում օրինաչափ է եզակի հրամայականի՝ **եա**→**է** հնչյունա-

⁴⁵ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 371:

փոխված վերջավորությամբ ձևերի օգտագործումը, մի բան, որ **ե, ի** լծորդության պարզ բայերի համար կանոնական դարձավ արևմտահայ գրականում՝ **շփէ՛, մաղէ՛** (XII դար), **պարզէ՛, խառնէ՛, յիշէ՛** (XIII դ.), պատճառական բայերի համար հանդես են գալիս գրական արևմտահայերենին բնորոշ ձևեր՝ **ցամաքեցո՛ւր, կերցո՛ւր** (Ա 1, 339): Տարածված կազմություններ են արգելական հրամայականի (**մի՛ մնար, մի՛ օծաներ, մի՛ թողուր** (XII դ.), **մի՛ պահեր, մի՛ վառեր, մի՛ խօսիր** (XIII դ.)) ձևերը (Ա 1, 357-358): Անկանոն բայերի անցյալ կատարյալի կազմության մեջ նկատելի է արևմտահայերենին հատուկ կազմությունների կայունացումը, ինչպես, օրինակ՝ **տալ** բայի հարացույցում է. «**Տալ** բայի անցյալ կատարյալում հետևողականորեն ունենք **տուի, տուիր, տուաւ** խոնարհման ձևերը» (Ա 1, 351):

Սահմանական ներկայի և անցյալի կազմության վերաբերյալ պիտի ասել հետևյալը. ներկայի **կու/կը, կ՛**-ով համադրական կազմությունը (**կու խօսիմ, կ՛աղօթէ, կը բուժէ** ձևերը արձանագրվում են որպես բարբառային-խոսակցական ձևեր. երեք բայերի դեպքում կանոնական է գրական լեզվում՝ **կու գամ, կու լամ, կու տամ**) միջին հայերենի բացարձակ հատկանիշն է: Ա. Այտընյանը, ինչպես նշվեց, դա համարում է լեզվական այն հիմնական նշանը, որով աշխարհաբարը զատվում է գրաբարից: «Միջին հայերենով գրող ոչ մի հեղինակ չի խուսափել այս

մասնիկից՝ սկսած Ներսես Շնորհալուց մինչև Ֆրիկ, Երզրնկացիները և հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները» (Ա 1, 322):

Անդրադառնալով **կու** մասնիկի ծագման հարցին՝ Գ. Ջահուկյանը գրում է հետևյալը. «XII դ. սկսած՝ այդ մասնիկը գրականության մեջ լայն տարածում է գտնում՝ ընդգրկելով հայերեն բարբառները գրեթե առանց բացառության, այդ թվում՝ այն բարբառները, որոնք գտնվում են Հայաստանից դուրս՝ Բյուզանդիայի և հետագայում Թուրքիայի արևմտյան մասում, Սիրիայում, Իրանում, հեռավոր Հնդկաստանում, Եվրոպայում»⁴⁶:

Ավելորդ չենք համարում քննարկվող ժամանակաշրջանի հայ մատենագրությունից բերել բնագրային մեկ-երկու օրինակ՝ դրանց լեզվի մասին ընդհանուր պատկերացում և ճաշակ տալու համար. դրանցում ակնառու են արևմտահայերենում և արևելահայերենում համընկնող կամ միայն արևմտահայերենին բնորոշ և գրաբարից տարբեր իրողություններ.

⁴⁶ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հարցեր, Բեյրութ, 2000, էջ 300:

Հանելուկներ

Ասորհեր. Չառ ի վեր ջուրն է մեկնած,
Ներքոյ ամուր աւզով փակած,
Աւազն ամեն հրով լցած՝
Սի քան զմի պայծառացած:

Կասրու. Որպէս տիկին յուշիկ գնայ,
Պարան յետնն ի քարշ կուգայ,
Բազմի յոսկի բարձի վերայ,
Որսիկ առնէ քան զբազայ⁴⁷:

Եգ. Է աննըմա՛ն աղվոր տիկին
Ինքըն ծնանի ըզմայր աւձին:
Թէ փոկու մասըն քեզ պիտի՛ն
Դու լաւ սիրէ՛ զորսորդընին⁴⁸:

Աղուէս. Չերդ ի գաղառ խիստ է ի յար.
Սիրէ զմորթին ուտէ զբանճար:
Ամ ինչ կարդամ զիւրմէ քեզ ճառ
Խելաւքն է ծով զերդ ըզխիկար⁴⁹:

⁴⁷ **Շնորհալի**, Եր., 1968, էջ 35-40: «Կատու» հանելուկը՝ որպէս աշխարհաբարի տարրերով լեզվական մնուշ, բերված է մաս **S. Շահբազյանի** «Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը» ուսումնասիրության մեջ: Սակայն հեղինակը կարծես ավելորդ ջանք է գործադրել մնուշի լեզուն «ավելի աշխարհաբարացնելու». լեզվական երկու իրողություն «սրբագրվել է» արևմտահայ աշխարհաբարով՝ **յետևէն←յետևն, կ'առնէ←առնէ** (հմմտ.՝ էջ 63):

⁴⁸ Տե՛ս էջ 62 (ձեռ. 1558, 385ա):

⁴⁹ Նույն տեղում:

411

Կանանքն. ասնի ճշիփն նասկցի պատնի՝
 [Լ արամա չեխիսար նախելու. զերկը արդ
 աղնիս զի զնի՝ ի կելու. զերդ զայլ աղժի
 ելնի՝ ի լու. քնուս չառնի ցարքն բեւեւ՝
 [Ի չարբը եղևնաւնս զար հիացն Լարի
 եւ զ՛արնսր. ի Էպելս նախնի՝ ի Բարս
 չար. Բարս զնա սիրի ի Բար ծիւսարս
 Է կիւնարանի չարս սարանի. սր չարս գրժ Լարի
 նա անսնանի. ի հարսն նախնի. ալ նա
 սր. նալ սրեղծումս չարս չե՝
 Չ ի Բարս յիւսար զեր զԲրեւ. սինախ արժ
 զի զեր ճաղ առն ունել. ի սարսր սա չոլ
 կելուսր սարանի. սի հիւս արժի զարժի սոմիս
 [Բարեւ սինիս սա զիսի քնուս. Բարսն ս հարս
 կի Բարսնի զլ. սրսի սարանի զերդ զլ
 չարս. սարսն. ճարսն ի սա զ կելուսր
 Ի յերկու սարսնի. ի սա զ բեւեւի

Մատենադարան, ձեռ. 695, 411ա

Հովհաննես Երզնկացի

Տաղ Երզնկացի Յովհաննիսի ասացեալ

- Ծո՛յ Յոհաննէս, ծո՛յ իմ տըղայ,
Դարձի՛ր ի տունն, ասա մեղայ,
Քեզի բերեմ հայու դըստրիկ,
Ըզբեզ օրհնել տամ քահանայ:

- Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Գէմ Աշային նըման չըկայ,
Աշան է թուխ, ունքն է կամար,
Քաֆիր եմ թէ զինքն ուրանամ:

- Ծո՛յ Յովաննէս, ծոյ ի՛ն տըղայ,
Դարձիր ի տուն, ասա մեղայ,
Աշան տաճիկ է անօրէն,
Այն քո հաւտուն հետ կու ջանայ:

- Հայ իմ մարիկ մի՛ տըխմարնար,
Չըկայ նըման գէմ Աշային,
Քանի որ յիմ տեսուս գատեր՝
Կենաց ճարակն է ինձ հատեր,

Լացն ու հառաճն է զիս պատեր,
Հոգու քաղիլ ու սրտացաւ:
Լեզուն պիւլպիւլ, ձայնն դումրի,
Մեջքըն բարակ գէտ ֆռանկի:

Աշան նրստեր էր փենճերեն,
Ափն երեսին էր, խիստ կուլար,
Թ'այսօր ծեծեց ինձ հայր դատին,
Թ'է՞ր կու սիրես հայուն որդին.
Տես թե կելնե մեկ մի կուգա՞յ,
Ականջըն խույ Յովաննեսին:

Խեւ Յովաննեսն, երբ գայն լըսեց,
Բըռնեց զճամբան ի Եզրնկին.
Ու գլխիբաց, գըտակն ափին,
Գնաց կանգնեց յառջև խանին⁵⁰:



⁵⁰ Հովհաննես Երզնկացի, Հայ քնարերգության մատենաշար, Եր., 1986, էջ 47:

Խնճարն իյիս ինչ բանսն. եօրի եօրի
հեանսոր օղի. հեօնիտ պիլանին մս-
հալսօղի. պէն մսսոր ման մոլայղի.
սէն ովանէս Բշիլ օղի. շերար սիրենք
Խօշկս լինի:

Յ ովանէսին մայրն աղայ հապերլա-
լայ իվան ըսպայ. զօրն իվաներն ի ժու-
հագայ սխուսնկս ման հոստոսանայ.
Լարկան արգէր ստեմեղայ. հաբեղայ
նի սր ողորմայ. աղայ լեօնք զէ սօ. Բե
իս ովանէսն իսսան սրանայ:

Ժ օյ ովանէս ժօյն աղայ. դարձիք ի
սուն սոսայ մեղայ. աշան սաճիկե
զէնէհար. Է- հայ բերեմ Բեյի համար
խան զաշանայլ աղէկ լինայ. Վճիմ
րիկսի տխմանար. չիկայ նման գէմ ո-
շային. աշանէ թուփ սանքնէ համար
խափարեմնէ զինքն ողանամ:

Ժ օյ ովանէս ժօյն աղայ դարձիք ի
սուն սոսայ մեղայ. հաբեղայ սրենկս

177 Ես

90

Կոստանդին Երզնկացի

Տաղ սիրոյ

Ակըն գոհար է յիբ շարած,
Ներքև շրթանցըն պատրաստած
Տեսն իւր կարմիր է զարդարած՝
Զինչ բուրաստանք, որ ծաղկեցաւ:

.... Քանի որ յիմ տեսուս զատեր՝
Կենաց ճարակն է ինձ հատեր,
Լացն ու հառաչն է զիս պատեր,
Հոգու քաղիլ ու սրտացաւ:

.... Եղբարք մի կան հետ մեզ սիրով
Աշխարհի բան ուզեն գրով,
Նա ես վասն այն յայտնի ձայնով
Սիրու բաներս սացի յուրով (ՀԴԲ, 92):



Եւ սիրտ ունիս սիւն անշարժ 97
որ բաժնէն լոս . ոչ զիս ճար . իս
իս հարստս եղև արժար իս
անշարժս լոս ճարձարս :
Այն զօհար հոն շարժ . նշարժ
շրջար շարձարս . արժար իս
հարձար շարձարս . զին շարձ
արձարս որ ճարձարս :
Չին որ հարձար լոս իս շարձ .
եւ արձար շարձ եւն իս շարձ . շարձ
ին ի շար շարձարս հարձ . հարձար
շարձար սիրտ ճարձարս :
Եւ իս հարձար ի շար սիրտ . զին
ճարձարս եւն շարձար . հարձար
հարձարս անար ճարձար . եւն շարձ
հարձարս :
Իս որ հարձար արձարս շարձար
ին շարձարս ի շարձարս . շարձար
հարձարս շարձարս . հարձարս ի
ին շարձարս :
ին .

Մատենադարան, ձեռ. 9271, 102բ-3ա

Տարեգրութիւն

«Ի ժամանակին յայնմիկ էր Գագիկ ի Կարս, եւ **յուղարկեաց** առ նա Սուլտանն գալ ի հնազանդութիւն: Եւ էր Գագիկ իմաստուն, խորհեցաւ զերծանել ի նմանէ խաղաղութեամբ, **հագաւ** զրահ **սեւ՝ զէտ** սգաւոր, եւ նստաւ ի վերայ **սեւ** բարձի: Եւ երբ **տեսաւ** զնայ դեսպանն, **հարցաւ** եւ ասէ, թէ Դու թագաւոր ես, **է՞ր ես սեւ հագեր:** Եւ ասէ Գագիկ. յորմէ հետէ մեռաւ բարեկամն իմ՝ Տողրիլ Սուլտանն, եղբայր Աբասլանայ, ես սեւ եմ յագեր, քանզի խիստ սիրեաք զիրար: Եւ զարմացեալ դեսպանն՝ երթեալ, պատմեաց Սուլտանին. եւ նա լսեց եւ հիացաւ յոյժ, եւ սիրեաց զԳագիկ վասն բարեկամութեան եղբորն. եւ ելաւ ամէն յեծելովն եկն ի Կարս առ Գագիկ ի տես, եւ հագոյց նմա հալաւ թագաւորական: Եւ արար Գագիկ պատիւ Սուլտանայ եւ զօրաց նորա: Չայս՝ այս ցեղ արար Գագիկ, եւ զերծաւ խաղաղութեամբ» (ընդգծումները – Ղ. Հովնանյան)⁵¹:

⁵¹ Տե՛ս **Ղ. Յովնանեան**, Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Ա, Վիեննա, 1897, էջ 17:

Կամենե ախարիս ամեն
 վայրուսաճք. և անց ասոր.
 և ամ ճ ուր դասասանանց
 համարս տարոյն ատալի ու
 ղիղ դասասորինքի: Չամեն
 զինչ որ աստենտանէր դուք
 անդէն գտանելոյնք թէ
 չար և թէ բարի:
 Թէ ի իւանեւամ
 Կայ որ օր թգրի ծառ
 այր թէ. և ի հազանդու թէ
 լինի: Եւ ի ք պատմանք աս
 նէն թգրին հանց որ մեա
 նին իրանաք: Լուս եղբաճք
 և և որդիքն որ յատալսագրի
 լեալ լինին: և ամ ի հար մե
 ղանանցն չլինին զրկաճք.
 Ի հայրենի ժառանգութեն.
 Եւ երթ զն անհաստութե
 չլինի մեռել հայրն ի պարտ
 նութենէն. զան լուկ զնի
 ըաց բարկութե. կամ այլ
 զել մեղանաց. և սուչ այլ է

Կեո ճասճ որդիքն կորնէն
 հայց լինի դասաստանա
 Եւ ընդ ի պարանէ եր պարտ
 անցքն աս հասարակ. և
 ընդ ի բանց ճ. որտէն.
 Եւ ի իւանի գաս
 ան. կամ յերկեր
 որ ընդ թգրի հազանդու
 թէն լինի: Լուկ է հանք զլու
 ի. և ս թգր լինէ և ար ճա
 թաս հանքն. և ս թագու հ
 ոյնէ. ասպս անճարակ բա
 ժին հասնի երկրն տիրոյն.
 զինչ ցեղ և կարենան հատել
 որ երկունքն լինին շահաճ.
 Եւ պս երկաթն. և պոյն ճ
 և այլ լեքն զինչ որ լինի որ ի
 հողէ է լինէ. ատեղայ ի իւանի
 նէ: Լոյն պէն և սորն և բոր
 անն. և սա թն. և կոն պն. և
 ճ ոյ թն. և սա պանին. խոննին
 և մագտարէն. որ է լին իւանն
 և այլ պս պէս ի իր որ բաղէ ոյ

Մատենադարան, ձեռ. 487, 51ա

Ջերմանց մխիթարութիւն

«Կերակուր տուր թրթկիճ եփած եւ տապկած, որ լինի ի հետն նուշ աղնձած: Եւ առ փերճոկած ոսք եւ աղնձած եւ հեղ մի եփե եւ ձգե զջուրն. եւ արկ ի վերայ մուգ նռան ջուր կամ սերկեւիլի կամ աղտորի ջուր, եւ այլվի եփե, եւ տուր որ ուտե.... Ջկերակուր շատ թող չուտե, մանաւանդ ի յամռան ատուրքն. հով ջուր խմե քիչ քիչ: Կերակուր դդմի մուղաւարայ, եւ սպանախ կերցուր, եւ բաժայ ձուկ խորված. եւ քան զամենայն ինչ օգտե խաչափարն՝ որ գարեջրով լինի եփած: Եւ երբ տաքութիւնն պակսի, հաւձագ՝ փերճկոտած գարով ի բան պահե, եւ բանջրբնուն հազար՝ եւ դալար գինձ կերակրի: Ապա թե ջերմն զօրաւոր է, կերակուր՝ թերխորով ձուի դեղնուց տուր.... Տե՛ս աղէկ եթե չկա պատճառ՝ որ արգիլե զքեզ, ա՛ն սեւ վրացի կոճ, եւ ի բողկն դիր՝ զերդ իւր ուսամն է. ապա զբողկն տուր որ ուտե, եւ վերաբերութիւն առնե: Ապա այն հիվանդն՝ որ վերաբերութիւն չկարե առնել, լուծման դեղ տուր, որ ուժովն լինի....»⁵²:

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 80, 84:

ևտոր կերակոր թրթի ճեփած ևտապիւծ
 աղըն ծածն ղով լեծ ծածն ղն փեր ճոկուլն : և
 առփեր ճոկած ուրբ . և աղըն ծած . և հաղմիսեփ
 է ղրով և ձգեղ ջորն . և ապարկի վերայ մոզնուան
 ջոր : կամ մոզս երկկ ջոր , կամ աղտորի ջոր .
 և այլ աղտորի է և տոր ոտուտե . և այլ տոր փշա
 տիփոն ենդ . կամ նուան հատիփոն ենդ . հետ
 տաբսի մատի . և զայտ կերակոր քտել մեղեքտ
 յայն ժամն տորի երբ լինի հաղ . ապա թէ հաղ լինի
 տորի սմելոյ տաճիկուեղ . և հայ կաւ . ^{և փերակոր} և ուրբան
 փոխան հացի փրորուտոր . աղըն ծածն ղով լեփ
 ած . և երկկ ջորին փոխան մրտեքամոքստոր .
 զեմտեքամոքսն արփի լեղլուծումն և ապուէ
 հաղին այն սակաքաղցրու թքնորի յինքն կայ .
 և կաթ թէ հանդի պիտոյ յաղիքն եղունդ քանուի .
 դունդուկն այարայ այն նշանաքս . առպանալ լե
 զորի ջոր , և բոսիան դտարուի ջոր . և ճինքդ ար
 ապկերն , հոզուի բերկուէն . և ճոփոքնուայ . և տա
 ճիկ կուեղ . և հայ կաւ . և հուում մատնեհարկ
 աւ . և պրտուէ ջն ջագիր այրած . և ապիտակա
 փեղ յարձիճէ . զայս զամենս ժողովէ և հուկա
 արա զերդիոր ուսմեէ . և կաթ թէ այտ ջորեա

Մատենադարան, ձեռ. 7717, 221աբ

Հայտնի է, որ հայ հին և միջնադարյան գրական հուշարձանները հանդիպում են տարրնթերցված տարբերակներով, որոնք հավանաբար նաև գրիչների միջամտության արգասիք են: Դրանցում կան լեզվական որոշակի տարբերություններ: Օրինակ՝ Շնորհալու «Այծն» հանելուկը ունի տեքստային հետևյալ տարբերակները.

Այծ. *Յամէն շրջի ինքն ի քարեր.*

Ունի ծախու մազէ *քրրչէր,*

Գինոյ ունի *աղուոր* տըկեր,


Ի օժտէ ձրի դանկի կոթեր⁵³:

Այծն. *Չամէն շրջի ինքն ի քարեր*

ունի ծախու մազէ *կրրչէր:*

Գինու ունի *աղվոր* տըկեր,

աւժրէ չրրի դանկի կոթեր⁵⁴:



⁵³ Տե՛ս **Շնորհալի**, Եր., 1968, էջ 35-40:

⁵⁴ Տե՛ս էջ 62 (ձեռ. 1558, 385ա):

589 385

Է անըման աղվոր տիկին . Եղն
 Ինքն ծնանի ըզմայր աւճին :
 Թեփոկու մասն բեզ պիտին .
 դուլաւ սիրէ զորսորդնի ն : այծն
Չ ամէն շըրջի Ինքնի բարեր .
 ունի ծախու մազէ կըրճեր :
Գ Ինու ունի աղվոր տըկեր ,
 աւժու ճըրի դանկե կոթեր : արուես
Չ Երիգ աղան խիստէ իյար ,
 սիրէ զմորթին ուտեղբան մար .
 Ամինչ կարդամ զիւրեք բղմա .
 Խելաքնէ ծով զերդրգ խիկար :
Ս Լտամ չէ նա խիստ ի խէն . ուղան
 զէտ կըրքն կոյ վիզնէ ի կէն :
Չ Ետ զայլ ազգի ելնէ ի շէն ,
 բրնաւ չարնու յուրքն բւեռ : Տճ
ՍԾ չարար եղեն այնոր . Չորի
 չատհիացայ ես վանայնոր :
 Թեպէտ նըման է ի փայտ չոր .

Մատենադարան, ձեռ. 1558, 385ա

Բերված վկայությունները XII-XIV դարերի մատենագրությունից են: Հետագա դարերում ավելի ընդգծվեցին նշված հատկանիշները: Առանձին իրողություններ կայունացան: Բայց շատերը մնացին չնորմավորված՝ երկրնտրության կամ եռնտրության մեջ. «Երկրնտրության երևույթը նկատելի է ...ընդհանրապես: Ասենք, միջին հայերեն լեզուն էլ, իր ամբողջության մեջ վերցրած, ունի լեզվաքերականական ձևերի բազմազանություններ, որոնք, իհարկե, լեզվի զարգացման ընթացքում պետք է կայունանային, նոր երևույթները պիտի ընդհանրանային, հները պիտի զիջեին ու մոռացվեին, սակայն Կիլիկիայի հայ պետականության խորտակման հետևանքով միջին հայերեն գրական լեզվի զարգացումը ևս իր բնական ու տրամաբանական վախճանին չհասավ» (Ա 1, 326):

Սի գրական լեզվի մահացման և մի այլ գրական լեզվի կազմավորման գործընթացը ենթարկվում է որոշակի օրինաչափությունների, որոնք ի ցույց են դրվում տարբեր լեզուների փորձով: Այդ գործընթացի էությունը շատ հըստակ է բնութագրել ինքը՝ Չահուկյանը. «Թեև միևնույն լեզվի մի վիճակից մյուսին անցումը տեղի է ունենում աստիճանաբար,– գրում է նա,– բայց հասնում է մի պահ, երբ գրական լեզվի տարբերությունը խոսակցականից ակնհայտ է դառնում, և տեղի է ունենում մի գրական լեզվի փոխարինում մյուսով՝ խոսակցական հիմք ունեցո-

ղով: ...Հին ավանդույթով առաջնորդվող հուշարձանների լեզուն սկսում է տարբերվել բնական ճանապարհով փոփոխվող խոսակցական լեզվից մինչև դժվար հասկանալի ու նույնիսկ անհասկանալի լինելու աստիճան: Առանձին հեղինակներ ձայն են բարձրացնում խոսակցական լեզվով գրելու օգտին կամ պարզապես գրում են այդ լեզվով: Կազմավորվում է նոր գրավոր լեզու, որ կանոնարկվելով (նորմավորվելով), ձեռք բերելով միասնականություն կամ, ինչպես ասում են, մշակվելով՝ դառնում է գրական լեզու»⁵⁵:

Միջին հայերենի մահացման և աշխարհաբարի կազմավորման գործընթացը այս ճանապարհով չի ընթացել: «Այս դեպքում հայերենը հանդես է բերել յուրահատկություններ, որ գրեթե աննախադեպ է այլ լեզուների պատմության մեջ»⁵⁶: Այդ «յուրահատկություններ»-ը ունեցան մի քանի ուշագրավ դրսևորումներ: **Առաջին**՝ միջին հայերենը՝ իբրև գրական լեզու, մի որոշակի ժամանակում («հասնում է մի պահ») ակնհայտ տարբերություններ չունեցավ իր հիմքում իբրև թե ձևավորված խոսակցական լեզվից, բնական ճանապարհով չփոփոխվեց մինչև անճանաչելի լինելու աստիճան և աստիճանաբար իր տեղը չզիջեց նոր գրական լեզվին: **Երկրորդ**՝ միջին

⁵⁵ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի տեսության և պատմության հարցեր, Բեյրութ, 2000, էջ 75-76:

⁵⁶ **Գ. Ջահուկյան**, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Եր., 1992, էջ 75-77:

գրական հայերենի գոյությունը չհասավ գրաբարի՝ որպես գրական լեզվի վերացմանը: «Երկու գրական լեզուն էլ շարունակում էին կողք-կողքի գործել՝ ստանալով գործածության կամ, ինչպես ասում են, գործառության տարբեր շրջանակներ»⁵⁷: Արևմտահայ աշխարհաբարի ձևավորման պատմությունը նկարագրելիս Հր. Թորոսյանը նույնպես նկատում է, որ այն բնականոն ճանապարհով չի ընթացել. ձևավորման այդ ամբողջ ընթացքը (վեցից յոթ դար շարունակ) ուղեկցվել է վայրիվերումներով՝ գրաբար-աշխարհաբար ներքին մրցակցությամբ, և ի վերջո XIX դարագլխին ավարտվել աշխարհաբարի հաղթանակով. «Գրաբարեն դեպի աշխարհաբար տանող ճամբան միեւնոյն կանոնատրությամբ չընթացաւ: Շրջաններ եղան, ուր այս ընթացքը դանդաղեցաւ, երբեմն ալ կասեցաւ: Եկան շրջաններ ալ, երբ փոփոխութիւնը կատարուեցաւ մեծ արագութեամբ: Ժողովուրդին լեզուն ԺԳ. եւ ԺԵ. դարերուն զգալապէս յառաջադիմելէ ետք, դանդաղեցուց իր գնացքը՝ նոր թափ առնելու համար յաջորդ դարերուն, մինչեւ որ ԺԹ. դարու կիսուն, ստացաւ որոշ ուղղութիւն, վերջնական հիմը կազմելով մեր արդի աշխարհաբարին: Վեց եօթը հարիւր տարուան տեւողութիւն մը հարկ եղաւ, ուրեմն, որպէսզի արեւմտեան աշխարհաբարը ստանար քիչ շատ կանոնաւոր կերպա-

⁵⁷ Նույն տեղում, էջ 90:

րանք»⁵⁸: Եվ **Երրորդ**՝ XIX դարում գրապայքարը ծավալվեց ոչ թե գրաբարի և միջին հայերենի միջև, ինչպես ենթադրել է տալիս գրական լեզուների զարգացման ու շրջափոխության տրամաբանությունը, այլ գրաբարի և աշխարհաբարի, որովհետև XVIII և XIX դարերում իր գործառույթները աշխարհաբարի հետ կիսում էր ոչ թե միջին հայերենը՝ որպես աշխարհաբարին անմիջականորեն նախորդող գրական լեզու, այլ գրաբարը: Գրավոր մատենագրության լեզուն միջին հայերենը չէ. այդ մատենագրության նմուշները շարադրված են կա՛մ գրաբարով, կա՛մ գրաբարախառն աշխարհաբարով, կա՛մ էլ աշխարհաբարով, որ առավել կամ պակաս չափով մշակվածություն ունեն: Օրինակները բազմաթիվ են:

Սրանք յուրահատկություններ են, որոնք գրական հայերենի զարգացման տրամաբանությունը շեղում են լեզուների բնականոն զարգացման ընթացքից, միջին հայերեն-աշխարհաբար փոխանցումներում ստեղծում մի իրավիճակ, որը իր նախադեպը թերևս չունի այլ լեզուների պատմության մեջ: Բայց սա այն դեպքում, եթե գրավոր գրական հայերենի զարգացման ընդհանուր շրջափոխում միջին հայերենը ընդունում ենք որպես առանձին՝ ինքնուրույն շրջափուլ: Մեկ այլ տրամաբանությամբ, որը, կարծում ենք, ավելի համոզիչ է դարձնում գրական հա-

⁵⁸ Հր. Թորոսեան, նշվ. աշխ., էջ 47:

յերենի զարգացման նկարագրությունը, միջին հայերենը կամ լեզվի պատմական զարգացման միջին շրջանի հայերենը խոսակցական լեզվի հիմքի վրա ձևավորված նորմավորվող գրական լեզու էր, որը, առանձնանալով գրաբարից, հինգ դար շարունակ զարգանալով ու մշակվելով, ավելի ուշ պայքարի մեջ մտնելով գրաբարի հետ, ձեռքերեց միասնականություն, դարձավ գրական լեզու: Միջին հայերենի զարգացումը իր ավարտին չհասավ միջին դարերում ազգային և քաղաքական կյանքի վայրիվերումների պատճառով:

Ինչ վերաբերում է գրական արևելահայերենին, ապա դրա մասին հարկ է ասել հետևյալը. XV-XVI դարերից սկսած, բարբառների ակտիվացմանը զուգահեռ, աշխուժանալ սկսեցին նաև արևելահայերենի լեզվատարրերը: Դրանք, իհարկե, առավելապես հանդիպում են **-ում** ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների գործերում:

Հայագիտության մեջ հայտնի է **-ում**-ի նախնական գործածության երեք օրինակ⁵⁹. **ա)** «Ապա թե հիւանդին թպտիրն մաշում լինի, կերակուր չոր է պատեհ, նա ընծային այլ ցեղ

⁵⁹ «IX դ. վերջի և X դ. սկզբի հեղինակ Շապուհ Բագրատունուն վերագրված պատմության մեջ («Պատմութիւն Շապուհ Բագրատունոյ», 1921) **կու**-ն հանդիպում է երեք անգամ, բայց, ինչպես ցույց է տրվել բանասիրության մեջ, այդ երկը ոչ մի կապ չունի իսկական Շապուհ Բագրատունու հետ)» (**Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի տեսության և պատմության հարցեր, Բեյրութ, 2000, էջ 300):

նիթ...» (**Մխիթար Հերացի** (12-րդ դ.), Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832). Ա. Այտընյանը այս վկայությունը գնահատել է որպէս **-ում** վերջավորութեամբ անկատար դերբայի նախաձև, մինչդեռ մի շարք փաստերով ճշտվում է, որ **մաշում**-ը արաբերենից փոխառված բառ է՝ **չարաղետ, չարագուշակ, չարաբաստիկ** նշանակությամբ (տե՛ս Ա 1, 304): **ք** «Ասացի թէ. «զինչ քրիստոնէայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն քեզ հետ լաւ են և քեզ աղոթք են առնում» (**Վարդան Արևելցի** (13-րդ դ.), Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861). ձեռագրերի նախնական տարբերակներում լեզվական այդ փաստը կա՛մ չի ավանդված, կա՛մ վկայված է «աղոթք են յառնում» ձևով, և եզրակացությունը այն է, որ «իրական հիմք չկա «աղոթք են առնում» ձևը 13-րդ դարի լեզվական փաստ դիտելու կամ իբրև այդպիսին ճանաչելու համար» (տե՛ս Ա 1, 304-305)⁶⁰: **զ** «**Գրում** ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին» («ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Եր., 1958, էջ 358) (տե՛ս Ա 1, 305): Այս վերջին փաստը, որ համեմատաբար հավաստի է, ավանդված է ավելի ուշ շրջանի՝ 15-րդ դարի մատենագրությունից՝ Չաքոն գրչից (1474 թ., Վայոց ձոր): Դա մեկ անգամ ևս վկա-

⁶⁰ Տե՛ս նաև **Ա. Մարգարյան**, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 472:

յում է, որ արևելահայերենին հատուկ քերականական այս իրողությունը համեմատաբար ուշ շրջանի երևույթ է:

Քննարկելով **-ում**-ի գործածության այս օրինակները՝ Սամվել Անթոսյանը հանգում է այն համոզման, որ դրանք «չեն կարող հիմք ծառայել պնդելու, որ **-ում** վերջավորությանը անկատար դերբայ ու նրանով կազմված ժամանակներ են եղել այս շրջանի (նկատի ունի XII-XIV դարերը - Յու. Ա.) միջին հայերենի մատենագրության մեջ» (Ա 1, 305): Շատ ավելի ուշ՝ XII-XIV դարից սկսած, երկու հեղինակներ (Նաղաշ Հովնաթանը և Ջաքարիա Ագուլեցին) սկսեցին լայնորեն օգտագործել **-ում** և **-իս** վերջավորությամբ անկատար դերբայի և ներգոյական հոլովի ձևերը: «Այս վերապահությունից երևում է,– գրում է միջին հայերենի ուսումնասիրողը,– որ մյուս հեղինակների մոտ **-ում** և **-իս** դերբայական վերջավորությունների չենք հանդիպում, քանի որ նրանք բոլորն էլ կիլիկյան բարբառի ներկայացուցիչներ են և ապրել ու ստեղծագործել են այդ բարբառի ազդեցության սահմաններից ներս» (Ա 1, 365):

Ուշ միջնադարում արևմտահայերենին բնորոշ **-է** վերջավորությամբ տիրապետող ձևերին գուգահեռ (խառնէ՛, տրորէ՛, ծեփէ՛, խօսէ՛ և այլն)՝ նկատելիորեն ակտիվանում է արևելահայերենի եզակի հրամայականի **-իր** վերջավորությունը (ելի՛ր, գտի՛ր, հետևի՛ր, խոստովանի՛ր), առավել շատ են օգտագործվում **ե** խոնարհման պարզ

բայերում հոգնակի հրամայականի միայն արևելահայերենին հատուկ արմատական-հիմքային ձևերը (կանչէք, խմէք, ծիծաղէք), արևմտահայերենին հատուկ նորակազմ վերջավորությամբ ձևերին զուգահեռ (իմացո՛ւր, ուրախացո՛ւր)՝ սկսում են հանդիպել պատճառական բայերի եզակի հրամայականի՝ արևելահայերեն կամ արևելահայերենին մոտ կազմությունները՝ **եռցո՛ւ, կաթեցո՛ւ, խմցո՛ւ** (Ա 1, 390-391), գրավոր խոսքում կիրառության մեջ են հայտնվում բարբառային **էս-, էդ-, էն-**ը և դրանցով բաղադրված ձևերը, գործածական հաճախականություն է ձեռք բերում **ոնց** բառը, որը միայն արևելահայերենին բնորոշ հատկանիշ է և այլն: Արևելահայերենը բնութագրող առանձին լեզվատարրեր, որոնք անմիջականորեն ածանցվում էին գրաբարից և ոչ թե արևելահայ բարբառներից (բացառականի **-ից-**ը, ներգոյականի **-ում-**ը, վաղակատարի **-ել-**ը և այլն)⁶¹ արդեն իսկ գործածվում էին վաղ միջնադարի մատենագրության մեջ: Պատահական չէ, որ դրանք առավելապես հանդիպում էին այնպիսի գրողների երկերում, «որոնց լեզուն հարա-

⁶¹ Գրաբարի անեզական գոյականների բացառականի **-ից-**ը, որը հետո փոխանցվեց արևելահայերենին, ուներ նաև եզակիի իմաստ, ներգոյականի **-ում-**ը, որը արևելահայերենի հոլովական համակարգը սահմանազատող հատկանիշ է, նախորդվոր կազմությամբ սովորական գործածություն ուներ գրաբար մատենագրության մեջ՝ ներգոյականի, երբեմն նաև տրականի իմաստներով, արևելահայերենի **-ել-**ով վաղակատարը գրաբարի անցյալ դերբայի պարզ զարգացումն է:

գատ էր գրաբարին»⁶²: Բայց դրանք էապես ակտիվացան ու շ միջնադարում⁶³:

Ըստ էության, ստացվում է այսպիսի պատկեր. գրաբարի ընդերքում աստիճանաբար և դանդաղ, իսկ XII-XIII դարերից սկսած՝ ավելի ակտիվ կերպով սկսում են ձևավորվել արևմտահայ աշխարհաբարի լեզվատարրերը: Այդ գործընթացը շարունակվում է մինչև XIX դարի վերջերը՝ մինչև գրական արևմտահայերենի նորմավորման փուլը: Իսկ ահա XV-XVI դարերից արևելահայերենի լեզվատարրերի աշխուժացումը աստիճանաբար տեսանելի է դարձնում արևմտահայ-արևելահայ կողմնորոշումը կամ, Է. Աղայանի խոսքերով ասած, «երկու հակադիր երևույթների բախումը», որը ի վերջո հանգեցնում է արևմտա-

⁶² Տե՛ս Է. Մկրտչյան, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 139:

⁶³ Միայն արևելահայերենին բնորոշ կամ դրան մոտ լեզվատարրեր, որոնք հավանաբար բարբառներից են փոխանցվել, վաղ միջնադարի ձեռագրերի հիշատակարաններում խիստ հազվադեպ կիրառություններ են ունեցել, ինչպես՝ **այ**→**է** հնչյունափոխությամբ կազմված՝ **այս** դերանվան եզակի ուղղ. և հայց. հոլովածները՝ **ես**, **զես** խոստացաք, **զես** եկեղեցիս, **զես** գիրս (ԺԳ, 49), **-իս** վերջավորությամբ դերբայական ձևը՝ դերբայ + օժանդակ բայ. «այժմ եմք ի կեանս **լալիս** և **կսկծալիս**» (ԺԳ, 59): Վկայված է նաև **արի** ձևը՝ **արարի** կրկնավոր հիմքով կազմության փոխարեն (ԺԳ, 68): «Ժամանակի խոսակցական լեզվում արդեն սկսել էր ձևավորվել անձի և իրի քերականական կարգը, որն իր թեկուզ և անկանոն ու անհետևողական արտացոլումներն է գտել նաև գրավոր տեքստերում» (ԺԳ, 28) և այլն:

հայ աշխարհաբարից արևելահայ ճյուղի տարանջատմանը:

Կարծիք կա, որ XVII դարը **միասնական հայերենի շրջանն է**: Եվ միասնական գրական հայերեն ասելով՝ առաջարկվում է հասկանալ նոր ձևավորվող այն գրականը, որի մեջ **հավասարակշռում են** արևմտահայ և արևելահայ լեզվատարրերը, կամ ըստ ուսումնասիրողի՝ «ընդհանուր առմամբ չկա արևմտահայ և արևելահայ լեզվամիջոցների ակնհայտ գերակշռություն», ինչպես փորձ է արվում ներկայացնել «Արիեստ համարողության» և «Պարզաբանություն...» գրքերի լեզվական քննության օրինակով⁶⁴: Երկու գրքերի լեզվում, ըստ հետազոտողի, ունենք արևմտյան-արևելյան լեզվաբաղադրիչների «միմոտավոր հավասարակշռություն»: Վիճակագրական տրվյալներով՝ լեզվական 20 գլխավոր բաղադրիչների մի շարք կետերում (մի դեպքում՝ 5 կամ 6, մյուս դեպքում՝ 6 կամ 7) առկա է միասնականություն: Այդ բաղադրիչների պարզ դիտարկումը, սակայն, ցույց է տալիս արևմտահայ լեզվատարրերի որոշակի գերակշռությունը արևելահայերեն տարրերի նկատմամբ. **նախ**՝ կիրառության մեջ են արևմտահայերենի այսպես կոչված՝ առանցքային բաղադրիչները (դրական ներկայի և անցյալ անկատարի կազմությունը, **-եր**-ով վաղակատարը, բացառական հոլովածևը,

⁶⁴ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Նոր գրական հայերենը XVII-XVIII դդ., Եր., 1979, էջ 89:

ներկայի և ըղձականի եզակի երրորդ դեմքի ձևերում է դիմանիշը և այլն), **երկրորդ**՝ այդ բաղադրիչները ակնհայտորեն կիրառական ավելի մեծ հաճախականություն ունեն արևելահայ առանցքային բաղադրիչների (-ում-ով անկատարը և ներգոյականը, -ել-ով վաղակատարը, բառածներ, բարբառային բառեր, հոգնակի ստացական հոլով և այլն) նկատմամբ, և **երրորդ**՝ արևմտահայերենին հատուկ լեզվամիջոցները, որոնք ձևավորվեցին միջին դարերում, XVII դարում արդեն «մեծ մասամբ համագային արժեք ունեին»։ գործածվում էին թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հեղինակների կողմից, նույնիսկ առանձին կազմություններ, ինչպես, օրինակ՝ բայի ներկա և անցյալ ժամանակների համադրական կազմությունը, է-ով բացառականը, հնարավոր է, բնորոշ են եղել ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ բարբառներին⁶⁵։ Եվ վերջապես, արդյո՞ք չէր կարելի հարցը նաև փոքրինչ այլ կերպ դնել. միասնական հայերենի նկարագրության մեջ ոչ միայն փորձել արձանագրել կամ «հաստատել» արևելահայ և արևմտահայ լեզվաբաղադրիչների գրեթե հավասարաչափ գործածություն, այլև XVII դարի հայերենը ներկայացնել աշխարհաբարի ձևավորման ու

⁶⁵ Տե՛ս նաև **Ռ. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 80-105: Քննարկվող գրքերի լեզվի հանգամանալից ուսումնասիրությունը մեր հետաքրքրության շրջանակներից դուրս է: Սակայն կասկածից վեր է, որ ոչ միայն դրանց, այլև XVII դարի գրական հուշարձանների լեզուն կարիք ունի գիտական հատուկ ուշադրության:

գարգացման արդյունքում ստեղծված լեզվական մի որակ, որը XVII դարում արևելահայ բարբառային-ժողովրդախոսակցական տարրերի առավել կամ պակաս ակտիվ «նուտրով» ձեռք է բերում արևելահայ խոսքին բնորոշ նշաններ: Ընդ որում, այդպիսի տպավորություն կարող է ստեղծվել նաև արևելահայ տարրերի (օրինակ՝ անկատարի կամ ներգոյականի **-ում** վերջավորության, **այս, այդ, այն** դերանունների՝ ժողովրդախոսակցական **էս-, էդ-, էն-**ի, գրաբար-արևելահայերեն **մի** հոդի, **ց-**ով բացառականի, **ի-**ով հոգնակի սեռական-տրականի) թեկուզ աննշան գործածությամբ: Իսկ այդպիսի երանգներ խոսքին կարող էր հաղորդել նոր գրական հայերենով առաջին երկու գրքերի («Համարողություն...» և «Պարզաբանություն...»)՝ ծնունդով կամ դաստիարակությամբ արևելահայ ենթադրյալ թարգմանիչը՝ Հովհաննես Հովով Կոստանդնուպոլսեցին, կա՛ն Արարատյան դաշտում ապրած և ծագումով ջուղայեցի Ոսկան Երևանցին և կա՛ն մեկ ուրիշը, ով ծնունդով կամ շփումներով սերտ կապի մեջ է եղել արևելահայ աշխարհի հետ⁶⁶:

⁶⁶ Հովհաննես Հովովի կենսագրության վերաբերյալ տեղեկությունները կցկտոր են. որտե՞ղ է ծնվել մշակութային այդ մեծ գործիչը, նրա ծնողները կամ ինքը Արևելյա՞ն, թե՞ Արևմտյան Հայաստանից են. չկան ստույգ տեղեկություններ: Բայց ուշագրավն այն է, որ հարցով հետաքրքրվողները նոր գրական հայերենով այդ երկու գրքերի թարգմանիչների անունները փնտրում են արևելահայ հեղինակների մեջ: (Տե՛ս **Ռ. Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 98-99):

Արևմտյան-արևելյան լեզվաբաղադրիչների մի մոտավոր հավասարակշռության վերաբերյալ եզրակացության առիթներ չի տալիս նաև XVII դարի չափաժողովի մատենագրության նմուշների լեզվական քննությունը: Համեմայն դեպք, այդ են ասում մեր ձեռքի տակ եղած գրավոր աղբյուրները: Իբրև օրինակ մատենագույց արվող հեղինակներից Ստեփանոս Դաշտեցու չափաժողովում այդօրինակ «հավասարակշռություն» արձանագրելը այնքան էլ համոզիչ չէ: Ըստ մատենագրական աղբյուրների՝ XVII-XVIII դարերի աշուղ-բանաստեղծ Ստեփանոս Դաշտեցին, ով նաև ժամանակի զարգացած և բարձր կրթություն ստացած վաճառական գործիչներից է եղել, ապրել և ուսում է առել Նոր Ջուղայում (ծնողները այստեղ են տեղափոխվել Գողթն գավառի Հին Ջուղայի Դաշտ գյուղից): Նրանից մեզ հասած բարձրարժեք չափաժողովները տալերն ու թաջնիսներն են: Դրանք գրված են ժամանակի աշուղական-ժողովրդական լեզվով, որում նկատելի է Նոր Ջուղայի բարբառի և առհասարակ արևելահայ բարբառների ազդեցության ակնհայտ գերակշռությունը: Հանդիպող արևմտահայ լեզվատարրերը հիմնականում քերականական երեք ձևեր են՝ **կու**-ով ներկայի կազմությունը, **է**-ով բացառականը, **-եր**-ով վաղակատարը, ինչպես նաև առանձին հնչյունափոխական իրողություններ՝ **դուն**, **կապուտ**, **կուր** (=կույր), **մսիլ** (=մրսել), **օր մ'ապրին**, բառեր՝ **աղէկ**, **շիտկէլ** (=հարդարել), քերականական

կազմություններ՝ «Նա Հուդայ այ որ իր **տերն** (փոխ.՝ **տիրոջը**) մատնում այ», **դրկէ՛, տարուած է, քո գլխիդ, ինձի տուր, զիս** և այլն, որոնք՝ որպես միջին հայերենից փոխանցված տարրեր, առհասարակ բնորոշ էին գործառնվող լեզվին: Չունեն բազմազանություն, աչքի չեն ընկնում տարատեսակությամբ և արևելահայ լեզվատարրերի հետ հավասարաչափ գործածության տպավորություն են ստեղծում հաճախակի կիրառության բերումով: Դրան հակառակ՝ ակտիվ գործածություն ունեն մինչև այդ չափածոյում գրեթե չհանդիպող արևելահայ բարբառային ձևեր, ինչպես՝ **մին, էս, էդ, էն** և դրանցից կազմվածները՝ **էսօր, էստեղս, էստից**, հնչյունափոխական այլ տարբերակներ՝ **մէկ էլ, գեղ, էլ, ասա, կասես**, ուրիշ **ին** (=են), **իրան** (=իրեն), **էն խոմ** վատրն, **արին** (=արյուն), **խէտ, ձէն, շուռ** գամ, **ընկաւ**, հարցական-հարաբերական **ու՞մ** դերանունը՝ «այգին **ո՞ւմ այ**», «մատն **ո՞ւմ այ**», «**Ո՞ւմ** հարցրիր», «**Ո՞ւմ** խեղճ տեսնես», էական բայի եզակի **ամ, այ, ան** կազմությունները՝ «մարդ **այ**», «ոտխ **այ**», «երկինքն **այ**», անկատարի **ու՞մ**-ը և **ա**-ով ներկայի ձևերը՝ «անում է», «մատնում այ», «քուրդին սիրում, եղբորն ատում», «էստեղս ի՛նչ ուզում է, անում է», վաղակատարի **-ել**-ով ձևը՝ «է՛րբ էս տեսել, չեն դրել», «Ողջ քուրդի են գցել ձեռն», բացառականի **-ից**-ով կազմությունը՝ **մարդի ոսկրից, աստից-անդից, ծակից, լճերիցն**, ներգոյականի **-ու՞մ**-ը՝ **աշխարհքումս, ձեռնումդ, փողոցներում, կրակումդ, երկըն-**

քումն, ձմռան օրում, բառիմաստներ՝ «Աչքս **գեշին** (=տգեղին) չտեսնում», արևելահայերենին բնորոշ կամ առավելապես արևելահայ աշխարհաբարում գործածվող այլևայլ իրողություններ և բարբառաձևեր՝ **գիժ, յենց, սիրում, տնագ, ջոկել** (=զատել), **ծուռ** խօսքիդ, **չում** (=մինչև), **հերիք, գործողանի** (=կտոր գործող), **դարուզի** (=ոստիկան), **կանգնաւ, պապենց, ոչինչ չէ, չեն տալիս** և այլն⁶⁷: Փոխվում է խոսքի ընդհանուր բնավորությունը. խոսքը ձեռք է բերում ակնհայտ արևելահայ երանգ: Եվ վերջապես, արևելահայ և արևմտահայ լեզվատարրերի այս համադրությունը ավելի շատ պայմանավորված է Դաշտեցու նախընտրած բանաստեղծական ձևով՝ **թեճնիս**-ով: Սա բանաստեղծության տեսակ է, որ կառուցվում է բառախաղի հիմքի վրա և հարանուն կամ համանուն բառերի հանգավորմամբ, հետևաբար պահանջում է լեզվական բազմազան ձևերի ազատ գործածություն, որին և դիմել է բանաստեղծը: Նույն հեղինակի նամակները, կրոնական և պատմական աշխատությունները, բանաստեղծությունների մի մասը գրված են գրաբարով կամ գրաբարախառն աշխարհաբարով:

Վերն ասվածից թերևս կարելի է եզրակացնել, որ XVII դարի հայ մատենագրության լեզուն միասնական անվանված հայերենն է այնքանով, որքանով համատեղում

⁶⁷ Տե՛ս **Ռ. Աբրահամյան**, Ստեփանոս Դաշտեցի, Հայկական գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, Եր., 1956, թիվ 2:

է արևմտահայերենի և արևելահայերենի կամ նրանց բարբառների լեզվատարբերը առավել կամ պակաս չափով⁶⁸:

XVIII դարը համարվում է այսպես կոչված **երկփեղկումի դարաշրջան**. մատենագրության այս կամ այն թևին պատկանող հեղինակների երկերում ակնհայտորեն երևում է արևելահայ կամ արևմտահայ կողմնորոշումը: Այսպես՝ Պաղտասար Դպիրի և Հովհաննես Կարնեցու աշխարհիկ երկերում գերակշռում են արևմտահայերենի տարրերը, իսկ Նադաշ Հովնաթանի և Ջաբարիա Ագուլեցու գործերում միանգամայն գերիշխող է արևելահայերենը:

Անվանումների մասին պիտի ավելացնել հետևյալը. **գրաբար**-ը գրի բառ էր՝ գրքի խոսք, **աշխարհաբար**-ը աշխարհիկ խոսք էր՝ աշխարհի բառ և իր հասկացական նշանակությամբ հակադրվում էր գրաբարին: **Միջին հայերեն** անվանումը այս տրամաբանությանը չի ենթարկվում և ընդամենը պիտի ընկալվի որպես աշխարհաբարի նախապատրաստական շրջափուլի կամ վաղ աշխարհաբարի պայմանական անվանում: Միջնադարի շատ մատենագիրներ հենց այդպես էլ ընկալում էին իրենց գործածած լեզուն և այդ լեզվով ստեղծվող արժեքների գործառական նշանակությունը: Մխիթար Հերացուց, Ֆրիկից, Երզնկացիներից մինչև Գրիգորիս Աղթամարցի, Նա-

⁶⁸ Ավելի մանրամասն տե՛ս **Յու. Ավետիսյան**, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 18-23:

դաշ Հովնաթան և ուրիշներ այդ մտքով են տոգորված եղել, այն է՝ գրել **աշխարհիկ կամ աշխարհական լեզվով, գեղջուկ բարբառով, աշխարհի բառով, ռամկորեն կամ ռամկական հայերենով, ռամկաց խօսքով** և կամ պարզապես **աշխարհաբառով**⁶⁹: Իր «Անգիտաց անպետ» գրքի վերջում Ամիրդովլաթ Ամասիացին նշում է պատճառներ, որոնք դրդել են իրեն երկը գրելու աշխարհաբարով. «Եւ այլ ասենք,– գրում է նա,– թէ էր եղաւ այս գիրքս աշխարհաբառ: Եւ այս երեք պատճառի: Ա այն է՝ որ ամենայն մարդ չկարէ քերական կարդալ, և կամ արտաքին գրեանք, որ յայս խրթին բառերն յիմանայ. այնոր համար եղաւ աշխարհաբառ....»⁷⁰:

Այսպիսով՝ գրական հայերենի գրական շրջանի պատմության համար առաջարկվում է հետևյալ շրջանաբաժանումը՝ **գրաբար** (V-XII դարեր), **աշխարհաբար** (XII-ից մինչև այսօր): XII-XVIII դարերը աշխարհաբարի ձևավորման կամ **վաղ աշխարհաբարի** ենթաշրջանն է, որը խիստ պայմանականորեն կոչվել է կամ կարող է կոչվել նաև միջին հայերեն: XVIII դարից սկսվում է **երկճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը**, որը, ի դեպ, ոչ թե ավարտվում է 1920 թ., ինչպես ներկայացնում է Գ. Ջահուկյա-

⁶⁹ Տե՛ս նաև **Ղ. Յովնանեան**, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Ա, Վիեննա, 1897, էջ 23-24:

⁷⁰ Տե՛ս **Է. Մկրտչյան**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 26:

նը⁷¹, այլ շարունակվում է մինչև այսօր (այսօր ևս մենք ունենք մեկ ազգային լեզվի երկու տարբերակներ կամ ճյուղեր՝ արևելահայերեն և արևմտահայերեն): Ուստի ավելի ճշգրիտ լինելու համար XVIII դարից մինչև 1920-ականները կարելի է համարել **երկճյուղ գրական աշխարհաբարի կազմավորման և նորմավորման ենթաշրջան**, քանի որ այս ժամանակահատվածում հայերենի երկու ճյուղերը մշակվեցին ու նորմավորվեցին որպես գրական լեզվի երկու տարբերակներ:

⁷¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 64:

3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՆԹԱՇՐՉԱՆ

Աշխարհաբար հայերենի հաջորդ փուլը, ինչպես առաջարկում է հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը, կոչվում է **Ժամանակակից հայերենի ենթաշրջան**՝ 1920 թ. հետո: Այն կարող է կոչվել նաև **արդի հայերենի ենթաշրջան**: Երկու դեպքում էլ նկատի պիտի առնել հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը: Այս սահմանագծումները ևս բացառության կարիք ունեն, քանի որ Գ. Ջահուկյանը շատ համառոտ է բնութագրում այս ենթաշրջանը և առիթ տալիս տարակարծությունների:

Տասնամյակներ շարունակ հաճախակի գործածության և ավանդույթի ուժով հայ լեզվաբանության մեջ **Ժամանակակից հայերեն** կամ **Ժամանակակից հայոց լեզու** հասկացությունը նույնացվել է գրական արևելահայերենին. ապացույց մեր կետարյա լեզվաբանական ժառանգությունը, ակադեմիական քերականության և բուհական դասագրքերի վերնագրերը՝ «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Եր., 1979, հ., 2, Եր., 1974, հ. 3, Եր., 1976, **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, **Ա. Մար-**

գարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, **Գ. Գարեգինյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991, **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999: Կարելի է շարունակել այս ցանկը: «Ժամանակակից հայոց լեզու» անվանված բոլոր այս աշխատանքները ներառում են բացառապես արևելահայերենի լեզվական նյութը: Ավելին: 1987 թ. հրատարակված «Հայերենագիտական բառարան»-ում ուղղակիորեն նշվում է, որ **ժամանակակից** կամ **արդի հայոց լեզու** ասելով ըստ էության հասկանում ենք արևելահայ գրական լեզուն: Բառարանի համապատասխան բառահոդվածում կարդում ենք. «**ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ... ասում են նաև ժամանակակից կամ արդի արևելահայ գրական լեզու, արևելահայ գրական աշխարհաբար, գրական արևելահայերեն**, կամ պարզապես՝ **արևելահայերեն... այժմ մեզ մոտ սովորական է այն կոչել ժամանակակից՝ արդի գրական հայերեն կամ ժամանակակից հայոց լեզու**»⁷²: Այս միտքը ընդգծվում է նաև բառարանի **ՀԱՅԵՐԵՆ** կամ **ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ** հոդվածում. «Հայ ազգային լեզվի բոլոր էական գործառնությունները այժմ փաստորեն իրականացնում է արևելահայ գրական լեզուն, որը միտում է դառնալու ընդհանուր հայության գրական լեզուն: Այժմ **ժամանակակից** կամ **արդի հայոց լեզու** ասելով՝ ըստ էության հասկա-

⁷² **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 62:

նում ենք այդ լեզուն»⁷³: Այլ կիրառություններում **արդի հայերեն**-ը՝ որպես արևելահայ և արևմտահայ տարբերակների միասնական անվանում, խիստ պայմանականորեն հակադրվել է **ժամանակակից հայոց լեզու** հասկացությանը: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի «Առաջաբան»-ում Է. Աղայանը փորձում է ներկայացնել գրքի համար որպես խորագիր ընտրված **արդի հայերեն** հասկացության իր ընկալումներն ու մոտեցումները: Միանգամայն ընդունելի համարելով այն տեսակետը, որ «արդի հայերեն ասելով հասկանում ենք աշխարհաբար կամ նոր հայերեն գրական լեզուն իր երկու գրական տարբերակներով, որոնք մեր ազգային գրական լեզվի գոյության երկու ձևերն են», բառարանագիրը միաժամանակ առաջարկում է **ժամանակակից հայերեն** տերմինը գործածել միայն արևելահայերենի համար. «Արևելահայերենը,– գրում է նա,– Հայաստանում սովետական իշխանության հաստատման ու պետականության ստեղծման շնորհիվ աննախընթաց կերպով ընդարձակեց իր գործառնությունները, բարձրանալով պետական լեզվի աստիճանին և զարգանալով դեպի համազգային լեզվի բարձունքը: Այս բնութագրությամբ,– շարունակում է Աղայանը,– «արդի հայերեն» անվանումը տարբերակվում է «ժամանակակից հայերեն» տերմինից, որով մեզ մոտ անվանում են մեր գրական և խոսակցա-

⁷³ Նույն տեղում, էջ 333:

կան լեզուներից (ազգային լեզվի տարբերակներից) միայն մեկը՝ արևելահայերենը»⁷⁴: Բերված փաստերը վկայում են, որ պայմանականորեն թե անպայման գիտական շրջանակներում կա այդպիսի մոտեցում՝ **Ժամանակակից հայերեն տերմինով անվանվում է մեր ազգային լեզվի միայն մեկ տարբերակը՝ արևելահայերենը**⁷⁵: Բայց այս դեպքում հարցի այսպիսի դրվածքը ջահուկյանական շրջանաբաժանումը, ըստ էության, տանում է փակուղի, քանի որ եթե **Ժամանակակից հայոց լեզու** ասելով՝ հասկանում ենք միայն արևելահայերենը, ապա այդ անվանումով հորջորջվող ենթաշրջանից դուրս է մնում արևմտահայերենը կամ այլ կերպ ասած՝ **սփյուռքահայերե-**

⁷⁴ **Էր. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ VII-VIII:

⁷⁵ Ի դեպ, կարելի է արձանագրել մի շատ ուշագրավ իրողություն. արևմտահայ քերականները, հավանաբար հետևելով ավանդույթին, հակված են արևմտահայերենին նվիրված իրենց աշխատասիրությունները, լինեն դրանք դասագիրք թե գիտական հետազոտություն, անվանակոչելու **արդի հայերեն, արդի հայ լեզու** և նման տերմինաբանությամբ, ինչպես՝ **Ն. Ռուսինեան**, Ուղղախօսություն արդի հայ լեզուին, Կ. Պոլիս, 1853, **Ա. Այտընեան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, **Ս. Գաթեան**, Տարրական քերականություն արդի հայերենի, Կ. Պոլիս, 1894, **Զ. Ասատուր**, Գործնական քերականություն արդի աշխարհաբարի, գիրք Ա-Բ, Կ. Պոլիս, 1900, **Յովի. Գազանճեան**, Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, **Զ. Մելքոնեան**, Գործնական քերականություն արդի հայերեն լեզուի, Պէյրուք, 1970, **Կ. Առաքելեան**, Արդի հայերենի քերականություն, գիրք 1, 2, 3, Պէյրուք, 1998 և այլն:

նը, և նույն տրամաբանությամբ՝ 1920 թ. տեսականորեն ավարտվում է երկճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը:

